


Հայկազ Ինժեռնային

ԼՆՏՐ ՅԵՐԿԵՐ



ԵՏԻՆ



30 JAN 2018

Handwritten signature

Handwritten text in a stylized script

Handwritten symbol resembling a stylized 'I' or 'L'

Handwritten text 'meshrus' with a blue rectangular stamp behind it



0105 MAR 10

[Faint handwritten text]

[Faint handwritten text]



1-35419x

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[Faint, illegible handwritten text]

[Faint, illegible handwritten text]

ԱԶԳԱՑԻՆՆԵՐԻՆ

Նման չեմ յես ձեր սիրելի պոետներին,
 Ձեր քուրմերին յերգս ոտար—մի խորթ հնչյուն,
 Յես չուզեցա հաճոյանալ ձեր սրտերին
 Այս առորյա, մեղկ ու թունոտ մեղձավանջում:

Յես յերգեցի գործարանի սև աշխատանք,
 Յեվ ճարճատված պողպատ մեջքերն անիվի տակ.
 Ստեղծագործ հրաշքները կոշտ ձեռքերի,
 Հաղթանակող թափը նրանց վեհ պայքարի:

Սթափման յերգ յես յերգեցի լքվածներին,
 Յեվ հրավեր՝ պատրաստ լինել զարթնոց որին.
 Յես յերգեցի աշխարհ ցնցող խենթ-փոթորիկ
 Վորոտ ու շանթ տեղալուց յես խաղաղ յերկինք:

Յեվ մարդկության հավատալիքն յես յերգեցի—
 Ծաղիկներով վողջ պսակված մի մեծ յերթի...
 Յես յերգեցի հուրը հալող ժանտ բռնուկթլան,
 Յեվ հրապույրք նորեկ կյանքի գեղեցկության...

Վնչ, նման չեմ ձեր սիրելի պոետներին,
 Ձեր քուրմերին յերգս ոտար, մի խորթ հնչյուն.
 Յես չուզեցա հաճոյանալ ձեր սրտերին,
 Այս առորյա, մեղկ ու թունոտ մեղձավանջում:

ՊԱՀԱԿ

Թող կորչին վոգիք, լքուն, վարանոտ,
 Յես կանգուն եմ դեռ իմ դիրքի վրա,
 Յեվ ինչպես պահակ, մինչ լույս առավոտ,
 Պիտի հսկեմ վես բարձունքը նրա:

Յեվ լեթե հանկարծ թշնամին կյանքիս
 Մթին անկյունից մահադավ լարի՝
 Վնչինչ... կմեռնեմ ժպիտը դեմքիս—
 Նշան հավատո գալիք հաղթ որի:

Իմ յետքից կրգա մի առողջ սերունդ—
 Ուժեղ և հպարտ իր նախորդներից,
 Փորձի մեջ բովված մարտիկների գունդ—
 Դիրքը թշնամուց կփրկի նորից:

Յեվ ստեղծագործ վոգետրությամբ
 Ինչ վոր կիսավարտ մնաց մեր որից՝
 Կտա լրացում վեհ գիտակցությամբ.
 Վողջճւյն ձեզ, յեղբայրք, ձեզ նախորդներից:

1918

ԻՄ ԱՇԵԱՐԲԸ

Վորքան ել ուզեմ ձգտել դեպի ձեզ,
 Վեհապանձ սարեր,
 Ու փարվել մաքուր ձեր ճյուղյա կրճքին,
 Վորքան ուզեմ յես
 Սլանալ վեր, վեր,
 Արծիվի նման հպարտ սավառնել՝
 Ելի՛ չեմ կարող, կուսական լեռներ,
 Յերկիրը թողնել,
 Վոր խարխափում ե կեղտ ու մուրի մեջ,
 Տառապում անվերջ.
 Յեվ յես կարիքի աշխարհն եմ ընտրում—
 Ճնշված ու լքված,
 Ուր վիշտ ու զրկանքն իրար հետ գրկված՝
 Մի յեղք են փնտրում:

Յեվ դուք, վան աստղեր,
 Վորքան ել դյուլթող,
 Միրալ պարուրող լինի ձեր հմայք,
 Վորքան ել գերեք հոգիս յերպող
 Ու ինձ յերկնային տանեք ձեր աշխարհ՝
 Դանրձյալ չեմ կարող,
 Կապված եմ կամա իմ մայր հողի հետ.
 Հար ու հարատև ամբոխի լացը,
 ցավ ու կսկիծը,

Ինձ կոչ են անում, թե՛ արի, պոեա,
Մեր վիշտը լացիր,
Մեզ ընկեր դարձիր:

Ո՛ր, ինչպես քաղցր ե լերկինք վերանալ,
Վիշտ, հոգս մոռանալ,
Լուսնի փայլի մեջ լողալ, սնվառնել,

Աստղերը գրկել,
Բայց և անողոք իրականութեան
Ուրվականը սե,
Վորպես մի ժանտ դե,

Մարմնացած ըմբոստ բողոքի նման—
Տալիս ե հրաման.

—Իջիր յերազկոտ յերկնային գահից
Կյանքին մոռնալու,

Նրան յերգ ունիս, վերք ունիս տալու:

Ու պիտի իջնեմ... ամբոխից փակ տալ
Դժվար ե, դժվար.

Հոգիս ձուլված ե նրա հոգու մեջ,
Ջղերս կապված նրա ջղերին,

Մի այլ ճանապարհ

Գոյություն չունի յերբեք ինձ համար:

Յեվ վորքան դյուրթող լինի ձեր հմայք
Յերկինք ու աստղեր

Կա մի քրտնալի, կարիքի աշխարհ—
Ճնշված ու լքված՝

Նրան եմ ընտրում,

Այնտեղ վիշտ, զրկանք իրար հետ գրկված՝
Մի յեղ են փնտրում...

ՅԵՐԳ ՀԻՆ ԳՎԱՐԴԻԱԿԱՆԻ

(«Բոլեբիզ» ցիկլոց)

Մշտածիծաղ, մշտաժպիտ, իմ բուլշեիզմ,
Վոր կյանքումդ միշտ հեզնել ես բանս ու աքսոր՝
Քեզ ե յերգում իմ քնարը ուրախ այսոր:

Դու անհանգիստ, դու իմ անհաշտ, հին բուլշեիզմ,
Վոր մղել ես ցարերի դեմ պայքար հզոր՝
Հպարտ կովիդ հաղթանակին պատիվ այսոր:

Յեվ դրոշիդ պատիվ—վողջճույն ալ ու բոսոր՝
Վոր փողփողում գեղգեղում ե ամենուրեք՝
Ամեն յերկրում հաղթանակներ տանում այսոր:

Դու իմ պարծանք, կյանքիս ընկեր, այ բուլշեիզմ,
Քեզանով եմ միայն շնչել, ապրել լույս-որ՝
Քեզանով ել գհհ եմ, հպարտ մինչև այսոր:

Տարիները ցանց են քաշել դեմքիս արդեն,
Ո՛ր, յես թեև հիվանդ, բեկված մեր հաղթ յերթեն՝
Բայց ջահել եմ դեռ մնացել հոգով այսոր:

Մշտածիծաղ, մշտադալար իմ բուլշեիզմ,
Վոր հեզնել ես կյանքումդ վողջ բանս ու աքսոր՝
Քեզ ե յերգում քո բուլշեիկ պոետն այսոր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԳԸ

Մի յերգ գիտեմ յես աննման—
 Հզոր մուրճի թափի նման,
 Վորտի պես հատու, խրոխտ
 Մի յերգ գիտեմ յես աննման:

Ծնվել ե նա մութ հանքերի
 Մետաղակուռ յերակներից,
 Ու ձայն առել քլունգների
 Ցասկոտ ու շեշտ հուր-զարկերից:

Մտունդ առել, ջիղ ու արյուն՝
 Բանուկ, ուժեղ բազուկներից,
 Գործարանը խանդ ու ավյաւն
 Շնչել նրան իր ժխորից:

Հմայք ունի յերգս այնպես,
 Հոգսի ժամին թե վոր լերգես՝
 Թախիծ ու վիշտ կչքանա—
 Լցված հոգուն նեցուկ ե նա:

Հէյ, իմ յերգը միշտ աննման—
 Հզոր մուրճի թափի նման,
 Վորտի պես հատու, խրոխտ
 Մի յերգ գիտեմ յես աննման:

ՀԵՎՈՒՄ ԵՔ ՈՒ ՏՆՔՈՒՄ...

Հոււմ եք ու տնքում, հառաչում ու լացում,
 Սև հողի շերտերի—հանքերի տակ տքնում.
 Իմ յերգի հերոսներ—տանջանքի մարմնացում,—
 ...Վոր յերբեք չեք հոգնում, չեք հոգնում...

Յերկաթն ե գալարվում ձեր ջլուտ ձեռքերում,
 Պողպատը խոնարհվում, դողդողում ու կքվում,
 Աշխարքիս ծանրանքը ձեր սրտում, ձեր հոգում—
 ...Յեվ սակայն չեք հոգնում, չեք հոգնում...

Նոր Կյանքի արշալույս, Նոր Ուղի հարթողներ,
 Միշտ շարժո՛ւն, ստեղծո՛ղ, հարածո՛ւն, աննկուն.
 Աշխարքիս զարդարանք, հիացքի կոթողներ—
 ...Վոր լեռեք չեք հոգնում, չեք հոգնում...

ՅԵՐԿՈՒ ԱՆՈՅԱՆ

Հազար բերանի մի բողոք եր այն,
 Վոր բռնկել էր վաղ առավոտյան.
 Գործարանների շչակներն էյին—
 Սուլ-սուլում էյին,
 Նավթահանքերի գուլգուկներն էյին—
 Բողոքում էյին:

Բայց ահա, կարծես, մեղկ ու վհատած՝
 Ըմբոստ ձայները իջնում են հատ-հատ,
 Մինչդեռ չերկուսը պայքարի մտած՝
 Դեռ սուլում էյին զիլ ու անընդհատ:

Մեկը նոցանից խզված հնչյունով,
 Նման հուսահատ թոքախտավորի,
 Մյուսը՝ առյուծի գոռ մոնչյունով,
 Կոչ էյին անում աշխատավորին:

Մեկը ասում եր.— Դեհ, բանվոր ընկեր,
 Կարճի՞ր անուշ քունդ, արի՞ գործարան.
 Յես ել եմ ձնշված քեզ նման, սղպեր,
 Թող մեր քրտինքով կշտանա ազան:

Մյուսը իշխողի բռնակալ ուժով,
 Բիրտ, խրոխտալի, ահարկու գուժով
 Ճչում եր կարծես՝—գործի յելիր շուտ,
 Ուշանաս՝ փողոց կնետվես անշուշտ:

Յեվ լուսաբացին՝ կապուլյո բլուզում
 Բանվոր, փեշաքար գործի յեն վազում.
 Վորի կուսն տակ մի կտոր սև հաց,
 Վորի՞ ձեռք-յերես ցրտիցը կապտած:

— Ե՛լ, պատրաստ կացեք չերբորդ սուլոցին,—
 Այսպես վերջ տվեց թոքախտավորը.—
 Թեև ծանր է լուծը մեր գործի,
 Բայց և հեռու չե բաղդավոր որը...

ԳՈՐԾԱՐԱՆ

Ահա գործարան...
 Նայում եմ նըրան՝
 Նա հրեշի պես
 Բացել է բերան,
 Տնքում է, փընչում,
 Հուր ու մուխ շնչում,
 Յեվ մարդը այնտեղ,
 Վորպես մի մժեղ,
 Նըրա արնախում
 Բացված չերախում
 Կարիքի դուռն է
 Անընդհատ բաղխում:

Ահա գործարան...
 Նայում եմ նըրան՝
 Նա իր ցանցապատ
 Թեթից պողպատ
 Վոստաջն է փռել,
 Գոտիներ կռել
 Յեվ վորպես հսկա
 Մի արնախում սարդ
 Արյունն է ծծում
 Աշխատավորի,

26/135E-1

Մարմինը հյուժում
 Նաչար բանվորի...

Ահա գործարան...
 Նայում եմ նըրան՝
 Այժմ դարձել է
 Հսկա դամբարան...
 Այնտեղ մարդըն է
 Կենդանի թաղված,
 Նա՛ վոր իր կյանքում—
 Ծաղիկ հասակում
 Ծաղիկ չտեսած՝
 Արյունն է թքում
 Յեվ մահը իրա
 Անեծքով կնքում...

Կամ չե՛ անիվը
 Մի ակնթարթում
 Բանվորին սեղմած
 Իր պողպատ թաթում,
 Տեսնում ես հանկարծ
 Ոճորք է նետում
 Ու մեքենայի
 Տալով ճակատին՝
 Տապալում գետին...
 Ահա գործարան...
 Նայեցեք նըրան՝
 Այժմ դարձել է
 Հսկա դամբարան...

1908



ԼՈՒՍԱՐԱՅԻՆ

Մորից յեկա այցելութեան
Գործարանի պարիսպներին,
Յերկաթակուռ այն շէնքերին,
Վորոնք սի որ
Շունչ տվեցին իմ յերգերին:

Ահա մտա նրա շեմքով—
Ինձ վողջունեց արթուն սուլիչ,
Մեքենաներն ուրախացած
Ու խենթացած՝
Արձակեցին յերկաթե ճիչ:

Իրար անցան ճախարակներ,
Ժիր փոկերն ու պտուտակներ,
Շոգեմուրճը հպարտ թնդաց
Ու վորոտաց՝
— Դեռ չեմ հողնել, դեռ չեմ հողնել:

Նրան խմբով ձայնակցեցին
Չարաճճի հազար մուրճեր,
Փրվելուով զբրբնգացին,
Կրկրացին՝
Վորպես ուրախ զեւ ձանրիկներ:

Յեկ այս ժխոր-համերգի մեջ
Մեծ քուրայից ժայթքեց վոստնուճ.
Այդ անհանգիստ կայծն եր անշեջ—
Առավոտյան՝
Նոր կլանքի յերգն եր պատրաստում:
1910

ՀԱՄԵՐԳ

—Յերգենք,—ասացին ճախարակները
Մութը չքանում, լույսն և մոտենում,
Այս յերգերի մեջ սիրտն և ամբանում,
Յերգենք, մոռացվեն ծանր հոգսերը:

—Կացեք մի վայրկյան,— շնջաց կաթսան,—
Ազդանշան տամ՝ յերգեցեք հետո.
Յեզ շոգի հանեց իր խողովակից
Ու մի զիլ սուրց թողեց յերկաթից:

Նրա սուր կոշից անիվը հսկա
Ծույլ, քնաթաթախ շարժումի ընկավ.
Իսկ իր չեռքից ել գլանակները,
Աշխույժ հոլերն ու ճախարակները:

Յեզ խիստ, համաչափ շեշտ ու թափի մեջ
Լսվում եք խրոխտ, ներշնչված մի յերգ
Մեքենավարն եր, աշխատանքի հետ
Ուրախ, յեռանդուն կազմել եր համերգ:

1911

ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾԱՐՍՆՈՒՄ

Մեղունների փեթակ և նա—
ժխուլից խուլ աղմուկով,
Թե՛ խոխոջող գետակ և նա—
Լեռնաղբյուրի խիզախ յերգով:

Մտել եմ չես նրա դռնով—
Չուզահեռ շարք—ժիր մեքենայք.
Ուրախ գվարթ պողպատ կռնով
Աշխատում են այստեղ կանայք:

Չարաճճի իլիկների
Վոլորտները սեղմ, նրբահյուս:
Բարամալի թեկիկների
Վիլաները արեգնալույս՝

Կարծես խմբով յերգում են ինձ
Իրենց հիմնը հերոսական՝
—«Ստեղծում ենք այս թեկերից
Մեռաքսապորձ մեր ապագան»:

«Այս թեկերից խեղդող պարան
Մենք հյուսում ենք մեր թշնամուն.
Դե, այդպես և մեր գործարան—
Պատանք նյութող չաք հառամուն...»:

1928, Ստեփանակերտ

ՄԵ՛Կ Ե՛Լ, ՄԵ՛Կ Ե՛Լ

Ջեյ, ձեզ մատաղ, բանվոր տղերք,
Մեկ ել, մեկ ել, մի զանկ տվեք:
Մի զանկ տվեք ցարի գահին,
Վոր խորտակվի նա հիմնովին:

Միհամուռ մեր ուժերով,
Հերոսների արյան գնով
Թեև ընկավ ցարն իր գահից,
Բայց չի ջարդված միանգամից:

Այժմ ել, ցարն է մեղ աղաչում,
Վոր խնայենք վերջին շնչում.
Բայց, ձեզ մատաղ, բանվոր տղերք,
Մեկ ել, մեկ ել, մի զանկ տվեք...

Մի զանկ տվեք ցարի գահին,
Վոր խորտակվի նա հիմնովին...

1903 հոկտեմբեր 17, Քիֆիս

ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆ

Տեսել ես, ընկեր, ալիկոծումը անեղ ովկյանի,
Ուր չերկու ալիք շարժուն սարի պես իրար են վազում,
Իրար են վազում փրփուրը բերնին հովազի նման...
Ու հոխորտալով՝ դարնվում, փշրվում ավազի նման...
Իսկ յերբ անցնում է վրեժի բուսն, հուզումը վաչրի,
Տեսել ես ինչպես հանգստանում է հսկան ջրերի,
Մեղմանում է նա... մանուկի նման ժպտում է ալիք,
Ալիքի միջից մի յերգ աննման ծփալով մեղմիկ,
Շոյում լսելիք...

* * *

Լսել ես, ընկեր, ըմբոստ չերկնքում կոչը վորոտի,
Վոր դղրդում է վորպես մի պալթուն մեծ թնդանրթի...
Տեսել ես ինչպես ամպերի կրծքին կայծակը զիգ-զազ
Իր լինգն է մխում փուլթկոտ, շեշտակի ու ցնցում
աշխարք.
Կամ ինչպես թափով ծառս-ծառս է լինում ցասկոտ
փոթորիկ.

Հսկա ծառերին չոքե-չոք անում, դարձնում խաղալիք
Մինչ վոր տեղում է հեղեղը վայրագ և ինչպես փրկանք՝
Ծանր չերկունքից ազատում աշխարք.
Բնությունը հաղթ ժպտում է ապա պայծառ արեպին—
Վորպես պատասխան չար արհավիրքին...

* *

Լսե՛լ ես, ընկեր, ծննդականի ճիշը հուսահատ,
 Վոր գալարվելով՝ արգանդի ցավից պոռա անընդհատ...
 Վիրավոր ընկած այն եգ առյուծն է այնպես մոնչոււմ,
 Յերկունքի ժամին Մեծ ազատութեան ոգնութեան
 կանչում:

Կյանքի և մահու պայքարը մղող այն մայրն է տանջվող...
 Իսկ չերբ հասնում է հուսո ըստապոր ժամը փրկավետ,
 Տեսե՛լ ես ինչպես այդ խորհրդավոր վեհ պայթումից հետ
 Մի վսեմ, խաղաղ մայրական ժպիտ, վորպես վառ
 հակինթ,

Փայլում է նրա արնոտ շուրթերում, դեմքը զարդարում:

* *

Այսպես եր ահա և այն վեհ ժամին Հեղափոխութեան,
 Յերբ վոր բաղխվեցին իրար հակառակ յերկու խնայան,
 Արիքի նման խուլ մոնչացին յերկու հզոր ուժ,
 Աշխարհը ցնցվեց... ու յեղան կործան կարգերը
 վատուժ:

Վայրագ հեղեղին, շանթ ու փոթորկին հետևեց թափով
 Հեղեղ ցնծութեան,
 Յերկունքի միջից մանուկը ծնվեց Մեծ Ազատութեան
 Ընկեր իմ, ընկեր, ահա մանուկը Հեղափոխութեան.
 Փորձութեան ժամին չերգվիր կրծքովդ պաշտպանել
 նրան:

ԴԱՐՔՆԻ ՅԵՐԳԸ

Զորկ, զարկ, ընկեր, մեղ բաղդ կռենք—
 Թող դողդողա մեծ սալը,
 Շանթի տարափ մեր շուրջ փռենք—
 Լուսավորվի աշխարհը:

Մենք բնութեան առողջ զավակ՝
 Գրտինք հեղենք—սե արյուն,
 Զլուս բազկով ճարենք վաստակ,
 Մոհտաջ չլինենք թշնամուն:

Զորկ, զարկ, ընկեր, ել կանգ չառնենք,
 Մահ է ահա լավ ուր...
 Այսպես թափով սալին զարնենք,
 Վոր դողդողա աշխարհը...

Մեռա՞նք ՉԿՈՐԱ՞նք...

Ինչպիսի՞ հերոս ընկերներ մեռան,—
 Մեռան, չկորան...
 Կրակն եր ցալտում նրանց աչք-ունքից,
 Նանթը՝ շրթունքից
 Յերբ խոսում եյին ծով-ամբոխի մեջ
 Վիշտ ու կարիքից.
 Վրեժի, ցասման հրով բորբոքված
 Նրանք բեմ լելան՝
 Յեկ բեմը դարձավ արյունով ներկված
 Զոհերի սեղան:
 Ինչպիսի՞ հերոս ընկերներ մեռան...
 Այսոր բանտերում, վաղը աքսորում,
 Մյուս որ կախաղան
 Հանելու համար դահիճը դաժան
 Կացինն և սրում.
 Բայց հերոսների շուրթերից սեղմված
 Նզովք չէ լսվում,
 Բաժակն են ըմպում Վերածնության
 Սլուներին կախված,
 Ու հիմնը՝ Հեղափոխության՝
 Հպարտ—չհաղթված.
 Ինչպիսի՞ հերոս ընկերներ մեռան...

Հեյ, ազատության անպարտ զինվորներ,
 Դուք, վոր անխուով
 Ներկեցիք փողոց ու գործարաններ
 Ձեր տաք արյունով,
 Նույն վայրում այսոր ջահիլ-ջիվաններ
 Ըմբոստ շարքերով
 Ձեր գովքն են անում... ձեր թափված արյամբ
 Մնվում, ամբանում...
 Յեկ անմահներիդ չիրգվում են անվամբ
 Ու հպարտանում,
 Վոր դուք, հերավի, պատվով, վեհությամբ
 Ձեր գործը տարաք,—
 Մեռանք՝ չկորանք:

1900

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Գալիս են, գալիս... Նայեք այն ճւղին,
 Վերջ չկա ծայրին...
 Գալիս են նրանք սև կմախքների
 Ծով գլուխներով,
 Գալիս, փրփրոտում բյուր ալիքների
 Հառաչանքներով.
 Նրանց թիբերը կախաղանների
 Զվանից պայթած,
 Նրանց կրճքերը համազարկերից
 Ծակոտված, ջարդված,
 Մեկի բերանից դեռ թարմ արջունը
 Կանթ-կանթ ծոթալիս,
 Մյուսի ճակատին վերքի բերանը
 Մե-սեին տալիս՝
 Գալիս են, գալիս...
 Գալիս են նրանք և ամպերի պես
 Կուտակվում, դիզվում,
 Վրեժ են ուզում...
 Նրանց բողոքից դահիճների դեմ
 Քարերն են հուզվում.
 Ահռելի նրանց վորոտումներից
 Ցնցվում է յերկինք,
 Հողմը հոր դադրած թևերն է պարզում—
 Գուժում փոթորիկ,

Զգայուն ծովը թափով յերազում
 Իններորդ ալիք.
 Յիվ մթնոլորտում ցասկոտ հրդեհի
 Կայծը բորբոքվում,
 Հղճը, վիթխարի, անխուսափելի
 Վրեժը կոփվում...

ՅԵՍ ՁԵՉ ԱՍՈՒՄ ԵՄ...

Յես ձեզ ասում եմ, կգա այն օրը,
 Յերբ իրավագուրկ ամեն մի բանվոր
 Իր աշխատանքի կդառնա տերը
 Ու ազատ, ուրախ կապրի բաղձավոր:

Նենգավորների դժնդակ սրտից
 Կիրքը մարդկային կկորչի անհետ,
 Կլուի յեսը շանթված ամոթից
 Յեվ գայլն ու գառը կապրեն իրար հետ:

Ու ել չի տիրիլ անարգ ստակը,
 Մարդուն մարդու դեմ չի զինիլ անվերջ,
 Ամբիոն կենի հալալ վաստակը,
 Իրար հոշոտող կովին կտա վերջ:

Յես ձեզ ասում եմ... մոտ է այն օրը...
 Թող ստրուկներին թվա այդ չերադ,
 Նրան կհասնի կովող բանվորը, —
 Մարտն ողների չե՞ դա հեզ մուրազ:

1905

ՄԱՔԱՌՄԱՆ ԺԱՄԻՆ

Մուրճը ձեռքներիդ մաքառման ժամին,
 Վորոտ ու թափով զարկեցեք սալին,
 Առանց վարանման, կայծակի նման
 Զարկեցեք արագ՝
 Բանի ջեռուցած լերկաթն է տաք-տաք:

Յեվ վաճ է նրան, ով այս վեհ ժամին
 Յեվ կվաբանի և՛ կթուլանա,
 Ով իր ձեռքերի կոշտերի վրա
 Հույս չի ունենա:

Յերկաթը շիկնած կսառի այն ժամ,
 Դեհ, յեկ ու նորից վառիր դու քուրան,
 Նեոխր զանգվածը, լարիր նորից ջանք,
 Վոր հուզվի կրակ...
 Վհչ, զարկեք, քանի յերկաթն է տաք-տաք:

Մուրճը ձեռքներիդ պատրաստ միշտ մնա,
 Իսկ ով մաքառման դեռ չէ ընդունակ՝
 Շարքերի միջից թող անհետանա, —
 Թույլերի չէ՞ տեղ. վոչ գործը կատակ...
 Դեհ, զարկե՛ք, քանի յերկաթն է տաք- տաք:

1911

ԼՈՒՅՑ ՍՈՒՍԱԿԸ...

Լուսն սոխակը... Լուսն նրա հետ
 Վերջին հառաչի տխուր արձագանք.
 Թռչնեցին կարծես ծաղկունքը այգում,
 Զրի մրմունջը մարեց պուրակում
 Յեզ այգուն պատեց սուգ ու հեկեկանք:
 Այն սերը անզուսպ, վոր բռնկել էր
 Հազար լեզվանի հրդեհի նման,
 Այն ազատ մտքում, ուր և ծաղկել էր
 Ազնիվ խոհերի չեղեմը գարնան՝
 Յնդվեցին, հանգան մոխրի նման:
 Յեզ այժմ նոցա փոշին հալածված
 Ուր վոր ընկնում է՝ տարածում է լաց,
 Կարծես մի բողոք ցավի, կսկիծի,
 Հանգիստը խլում բաղդավոր մարդկանց:
 Լսում է վողբը մանուկ անտառը,
 Աշնան որի պես դալկանում ծառը,
 Զրին խառնվելով լացի ամեն շիթ՝
 Թույնի յե փոխում աղբյուրը վճիտ...
 — Լուսն սոխակը...

ԿԱՐՈՑ

Խայթի թույնով մրմնջում է իմ հոգին,
 Կարոտս ան, կարոտիդ տուր լիացում.
 Յես բողոքով կապացուցեմ աշխարքին,
 Վոր մեր սիրույն դու չես ավել մոռացում:

Մնւտ է, սիրելի դու չես կարող ուրիշին.
 Անցողական հաճույք է այդ—մի ժամանց.
 Վնչ մի վայելք տեղը չի տալ այն հուշին,
 Վոր հոգուդ մեջ ակոս ունի խարանած:

Ինչպես հավքը, վոր դառնում է դեպ իր բույն,
 Ինչպես ծաղիկ, վոր արևն է միշտ տենչում,
 Այնպես նորից ինձ պիտի, դաս իմ թռչուն,
 Սիրույս խայթից քո սիրտն ել է մրմնջում...

Վ. Ի. ԼԵՆԻՆ-ԻՆ

Վանգնել եմ անա պատկերի առաջ,
 Դիտում եմ նրա գծերը դեմքի.
 Մա հանճար ե մի, թե՛ գորավար քաջ
 Վոր պաշտամունքը դարձավ ամենքի:

Գտնողը լյառ ե լերկ, անհաս ու հպարտ,
 Ճակատը անհաշտ—կռիվների դաշտ—
 Խոր աչքերի մեջ այրող անապատ,
 Անողոք իրա հրով կռապաշտ:

Նայում ե հեզնոտ անցած աշխարհին
 Յեվ կարծես ծաղրում բուրժուաներին.
 —Վորքան ել ուզեք վեր կենալ նորից՝
 Դատապարտված եք մահվան այսորից:

1919

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ-ԻՆ

Աչքերդ կապույտ չեթերի նման
 Յեվ հոգիդ շուշան,
 Միրտդ խորունկ ծով, ազնիվ, աննման,
 Ընկեր Շահումյան,
 Զայնդ՝ զանգակի վսեմ մի զողանջ,
 Թափանցել զիտեր
 Յեվ վոզևորել շեշտոյն իր սքանչ
 Վհատած սրտեր:
 Խոսքդ չեք լուկ խոսք, այլ պատգամ հզոր
 Կայծակնող ու վառ,
 Թշնամիներդ և միսչև այսոր
 Գիզնից դողահար:
 Դու հո չմեռար, նորից կյանք առար,
 Յեվ հաղթ քո մահով
 Ծլեց ու աճեց մի նոր զաղափար,
 Փովեց աշխարհով:
 Մահդ խթանող ցնցեց շատերին
 Մեր կուռ շարքերում,
 Ո՛ր, յեւ ու մի տես քո մարտիկներին
 Կովի դաշտերում:
 Քայլում են անա հաղար հազարով,
 Քո ճանապարհով,
 Յեվ յերդվում քո տեղ վրեժդ լուծել.—
 Դեհ, գնանս բարով...

1920

ԳԵՎՈՐԿ ԱԹԱՐԲԵԳՅԱՆ

Տեսել եմ նրան վոչ թե յերազում,
Այլ հենց կյանքի մեջ.

Տեսել եմ նրան պսակ մուրազով
Տարերքների մեջ.

Ե՛ն վոր ասում են Վահագնի մասին,
Թե կար մի մանուկ

Ալավ-մազերով հրածին հսկա՝
Հենց նա՛ լե՛ վոր կա:

Վորտեղի՞ց յեկավ Վահագնը այս նոր,
Վճր սեզ լեռներից,

Վորտեղի՞ց իջավ կորյունն այս վազրի՞,
Վճր անտառներից.

Նա սլանում եր նժույգից ել սուր
Գնդակից արագ

Յեվ խորհրդային թշնամիներին
Անում վոտնատակ:

Սիրում եր սուրալ ազատ ողի մեջ
Արծիվի թափով,

Սիրում եր գոհի վրա խոլանալ
Ազգող սարսափով:

Բյուրեղ հոգու տեր՝ սիրում եր ցայտել
Բյուրեղ ջրի պես,
Կամ գահավիժել լեռների ծոցից
Ջրընկեցի պես:

Ու վերջին անգամ մի որ ել ուզեց
Սլանալ վեր, վեր,

Ողանավի մեջ նորից ստուգել,
Թե վորքան է լավ

Միշտ բարձր լինել... ու հպարտ մեռավ
Մահով յեղեռնի...

—Լազուր հոգու տեր հերոսը պիտի
Բարձունքում մեռնի

27 մարտի, 1925

ԼԵՆԻՆԸ ԱՆՄԱՂ...

Այն ռվ ե ասում՝ թե մեռավ Լենին...
Մի՞թե կմեռնի արևը պայծառ,
Կամ թե կձարի՞ շուռչը ովկյանի.
Արդյոք տեսել եք Մարսը խավարի,
Կամ անհետանա Հիմալայի սարն:

Նրա գործերը՝ մի-մի արևներ,
Յեվ ավանդները՝ խորանիստ ովկյան.
Նրա պատգամներն—Մարսի բևեռներ—
Վեհ ու անսասան վորպես Հիմալայն:

Բայց այն ռվ գիտե... գուցե և լինի,
Վոր մի որ մեռնի արևը հսկա,
Գուց ր . . .

Վոր անգամ ցամքի ջրերի արքան,
Խամրի, չքանա և Մարսը վոսկյա,
Խորտակվի հիմքից Հիմալայի սարն...

Ու Լենինը դեռ
Կմնա անմահ բյուրավոր դարեր.
Նրա անուշը
Այս ամենից ել հզոր ե, անմեռ...

ՔԱՂԱՔԸ

Ահա քաղաքը... հսկա բուրգերի մի զանգված ե այն
Թե միապաղաղ պողպատից ձուլված լեռների շարան
Ու թրամների, հեռախոսների ցանցերը անխոնջ
Շաբժի յեն բերում, աղմկում կյանքի յերակները վողջ

Ահա փողոցը... մեծ, յերկար ու լայն գետի լե նման
Ուր վոլորտներով ծփում ե, յեռում հոսանքը շարժման
Յեվ ուր վիթխարի շենքերը քարե յերկնահուպ շարքով՝
Կապույտ մի ճամպա յեզրել են վերից անհուն լա-
զուրքով:

Այստեղ ցուլի պես բառաչում ե, տես, կառքը ինք-
նաշարժ,

Այնտեղ աղմկում հանրակառքերը, թրամները վարժ,
Մրանց արանքից ծիծեռնակի պես սուրում են ճարպիկ
Հեծանիվները, շալակն առած կին, տղամարդիկ...

Յեվ այս ամենը, և՛ կառք, և՛ թրամ վազքով խուռներամ,
Հզոր, դյուրթական գաղտնի մի ձեռքով ալիքանման՝
Պտույտ են գալիս, վորպես համաչափ տեմպը սլաքի,
Ու չեն խանգարում թանչը քաղաքի, հեքը քաղաքի:

Յեվ գոհ ե այստեղ մարդը այսորվան—ուժի ու փառքի,
Վոր այս ժխորում ծծում ե առողջ հյուսթերը կյանքի,
Ծծում ե քամում բույր ու հրապույր, հափրում,
արբենում,

Ու չե հագենում... ու չե հագենում...

Ո՛ր, այս խնճույքի վոլորտումներին, լույս փողոցների
Հնչուն լերգերին

Անմաս ե միայն ստեղծողն այն,
Վոր շուք ե տվել նրա վերամբարձ բազմահարկերին,
Ինքը մնացել մոռացված, մենակ, վորպես խորթ զավակ:

Յեվ բանակ դրած քաղաքածայրում, վորպես գոռալիք,
Այստեղ ձուլվում ե գործարաններում սերունդը գալիք.
Ո՛ր, հետևեցեք նրա փոթորկող սլտի բարախման,
Նա ել իր խոհերն, իր հույզերն ունի, իր գեր-նպատակ,
Վորի ծնվ-թափին չի դիմանալու վնչ մի ամբարտակ...

1911. Փաբիզ

ՍԵՑՅԵՐԸ

Գրամատան ներքին հարկում մռայլ ու դաժան,
Ուր մտնելուց սառնությունն ե յերեսիդ զարկում,
Արկղների կա պողպատե չորս պատի շարան,
Ժանտ ու դաժան, մութ, անհամբույր այն ներքին
հարկում:

Պողպատե այն արկղներում վոսկին ե զնգում,
Հազար միլիոն, միլիոն հազար դեղնագուլչն վոսկին.
Ո՛ւմ քրտինքը, ճւղ արջուննն ե այստեղ հեկեկում...
—Ամեն յերկրի բանվոր մարդկանց ե ամեն ազգի:

Շահագործող հարուստների թալաններն են այն,
Վոր բիրել են դրամատուն պիս տալու այնտեղ,
Անապահով ե իրենց տուն—վախ կա գողանան,
Գողը գողից ե վախենում՝ տանը, ամեն տեղ:

Յեվ ամեն որ խորհրդավոր այս մթին հարկում
Զույգ բանալիքն են զըրնգում—իրար սանուկող.
Գալիս, գնում յերկու սեռից, վոսկու հետ խաղում,
Բերում, տանում, անհետանում—

—Գող՝ ու սիրտը դող...

1916

ՅԵՍ Ա՛ՅՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ...

Ե՛ն՝ վոր կիսահալ սառույցի տակից
 Ժիր վտակներ են հե ի հե լողում,
 Ե՛ն՝ վոր ձյունների վերջին հալոցքից
 Թավիշ, աղվաճաղ կանաչն ե շողում,
 Ե՛ն՝ վոր արևի կենսատու շողքից
 Գարնան առաջին ծաղիկն ե ծլում
 Յեվ մանուկի պես արթնացած քնից
 Աչերը ճճլում՝
 Յես սօյն եմ սիրում:

Ե՛ն՝ վոր նայում ես սարերի լանջին
 Պուտերի խուճբն ե կարմրին տալիս,
 Լսում ես ջահել արտերի միջին
 Արտուտի ազատ կանչը թնդալիս
 Յեվ այդ հաղթական ցնծալի կանչին
 Տեսնում ես նորեկ ընկեր-թուչուններ
 Արձագանքում են, տալիս վողջույններ
 Ազատ լեթերում
 Յես սօյն եմ սիրում:

Ե՛ն՝ վոր այդ սրտիդ գոհունակ ժամին
 Տեսնում ես ձեկել հյուսիսի կողին
 Շողաց մի փայլակ... յետքից ել խրոխտ
 Հեռու ներդաշնակ մի անուշ վորոտ,
 Ուր հոգիդ նուչնպես թնդում ե, զգում,
 Վոր այդ վորոտից անձրի ե դալու,
 Ողբ մաքրելու ու մեզ բերելու
 Յանկալի գարուն
 Հինց սօյն հմ սիրում...

1909

ԿԱՐՄԻՐ ԳԱՐՆԱՆ

— Ապրիլ...

— Ապրել միայն կարմիր գարնան,
Յերբ ջրերն են իրար խառնվում—

Գետեր դառնում,

Յերբ կանաչն ե հասակ առնում,

Փարթամանում,

Ապրել միայն կարմիր գարնան:

— Կովեիլ...

— Կովել միայն կարմիր գարնան,

Յերբ վորոտն ե ահեղ թնդում,

Յերբ կայծակն ե յերկինք քանդում,

Կռիվների բացում քառս,—

Տարերքների խող ովկիանոս:

— Մեռնել...

— Մեռնել միայն կարմիր գարնան,

Յերբ հեղեղն ե լեռներ խոցում,

Յերբ սելափն ե ուղի բացում,

Ինչ կա անպետք՝ տանում իր հետ,

— Անցած կյանքի ել վնչ մի հետք...

ՆԱՄՈՒՍ ՈՒ ՂԵՅՐԱԹ

Դեռ թոթովախոս մի մանուկ եյի
Յեւ յոթ տարեկան անգամ չկայի,
Յերբ ինձ ավանդից հայրս իմ անուս՝
Մի սրբազան խոյք, և դա եր՝ «Նամուս»:

Դպրոցի շեմքին դեռ վոտք չդրած՝
Դեռ նոր եյի գիրք յես ձեռքս առած,
Յերբ մորս համրուչը թրջեց իմ ճակատ
Ու պատվիրեց ինձ անել միշտ «ղեյրաթ»:

Բայց կարճ մնացի ուսումնարանում,
Աղքատի բախտը, դե, ի՜նչ ե լինում...
Հորս պատվերով սովորեցի արհեստ,
Սիրեցի նրա վաստակը համեստ:

Յեւ այն որից յետ,
Յերբ ընկերացա մուրճ ու սալի հետ,
Քրտինքը դեմքես ծորում ե կաթ-կաթ
Յեւ ինձ հիշեցնում՝ նամուս ու ղեյրաթ,
Նամուս ու ղեյրաթ:

ՉԱՐԸԴ ՏԱՆԵՄ...

(Մանուկ հուճեմից)

Իմ նանը, բալենք, մի շատ լավ կին եր,
 Ժամ ու պատարագ նա շատ կը սիրեր.
 Թե արթնանալուց, թե քուն մտնելուց
 Ինձ համար նա միշտ աղոթքներ կաներ:
 Ու թե պատահեր՝ հիվանդանայի,
 Կամ անակնկալ փորձանքի զայի՝
 Նա գորովալից հոգատարու թյամբ,
 Կրճփին փարելով, միշտ կը հարցըներ.
 — «Ասն, բալիկըս, ի՞նչդ կը ցավի,
 Ասն դե, նանը քո չարըդ տանի»:
 Իմ խեղճ նանիկը իր ամբողջ կյանքում
 «Չարըս եր տանում», չէլի հասկանում:
 Ա՛խ, իմ մայրիկը, սիրուն մանուկներ,
 Այնքան բարի յիւր, այնքան անձնավեր,
 Վոր վերջը, իրավ, իմ «չարըս տարավ»...
 Միւրած բալիկին վորբ մենակ թողավ...

1899

ՈՏԱՐՆ ՈՒ ՀԱՐԱՋԱՏԸ

Հետաքրքիր մարդուն մեկը
 Պտույտ գալով շուկայում,
 Պահ մի կանգնեց խանութի մոտ
 Արծաթագործ վարպետի.
 Այնտեղ մուրճի զարկերի տա
 Արծաթն եր հեկեկում
 Յեղ վարպետի ուժեղ ձեռքում
 Գալարվելով՝ տափակվում:
 Անցավ մարդը մի այլ խանութ
 Ու կանգ առավ նրա մոտ,
 Վոսկերիչն եր թեթև մուրճով
 Վոսկին ծեծում լեռանդոտ.
 Նրա փափուկ զարկերի տակ
 Համր, թեթև տնջալով
 Փայլ վոսկին եր խուլ հառաչում,
 Արտասուք կուլ տալով
 Թողեց նրան անցավ մարդը,
 Դարբնոցի մոտ կանգ առավ,
 Ուր լերկաթն եր կռանի տակ
 Աղմկելով բողոքում.
 Հսկա թափով իրար յետքից
 Հարվածելով մեծ մուրճը,
 Հորդ արցունքի, շանթի տարափ
 Հեղեղում եր իր շուրջը:

Ու անցորդը դարձավ նրան,
Այսպես հարցրեց յերկաթին.

«Աստ, յեղբայր, ե՞ր արծաթը
Արտասվում ե կամացուկ,

Վոսկին՝ քնքույշ այդ մետաղը,
Դիմանում ե իր վշտին,

Մինչ դու—կոպիտ, սե մետաղդ—
Այդպես դժգոհ վիճակից՝

Ասես ցավդ ուժեղ լինի
Քնքույշ վոսկի-արծաթից»:

— Այն, ճեշտ ե քո ասածը,
Պատասխանեց յերկաթը,

Բայց դու՛ն եմ ավելի ցավ,
Քանի վոսկին ու արծաթը.

Մինչդեռ նրանք ծեծկրվում են
Իրենց ոտար մետաղից,

Յես հարվածվում, մղկտում եմ
Իմ հարազատ յեղբորից.

Չկան մի բան այս աշխարհում,
Ազնիվ պարոն, ցավալից,

Քանց այն, յերբ մարդ ծեծկրվում է
Իր սեփական կոտորից:

ՀԱՐՃԻԿՆ ՈՒ ԱՂՋԻԿԸ

(Ալեգորիա)

Նվեր լուսց մենշեկներին

Հարձիկը մեղկ, հանդիպելով մի որ կույսին,
Ասաց. «Աղջիկ, շատ եմ լսել յես քո մասին.
Ապրում ես մեն, անմատչելի, հպարտի պես,
Շորդ պատուած, ինքդ ել սոված աղքատի պես:

Մինչ անա, տես, գլխարկ ունիմ յեսն ջայլամի,
Փորս միշտ կուշտ, թըովըռում եմ, ինչպես քամի.
Ամենայն որ գվարճանում, ուբախանում,
Ազատ, անհոգ, բանկետներում, թե դուխանում:

Կրծքիս վոսկին, տես, ախն Ջոնիցն եմ ստացել,
Այս գոհարն ել փախչող Հանսից ինձ մնացել.
Տաճիկ փաշան որ ու գիշեր տարել քեֆի,
Իտալացին զգեստ կարել ինձ շլեյֆի»:

Յեզ կույսը մեր պատասխանում ե հարձիկին.
«Դեռ խոսում ես, չես ամաչում, լաչառ դու կին,
Այն սվ լինի, ծախվի քեզ պես ամեն մեկին,
Վոր չունենա և՛ դարդարանք, և՛ հացի գին»:

Յես աղքատ եմ, շորս պատուած, ինքս ել սոված,
 Բայց մատներիս կոշտերովն եմ ապրել սովրած.
 Իմ զրկանքը կը վերջանա այսորվանից,
 Քոնը, թշվառ, սկսվում ե՛ հենց վաղվանից»:

2820

ԼԵՆԻՆԳՐԱԴ

(ՎԵՑԵՐՈՐԴ ՖՐԱԳՄԵՆՏ)

I

Լենին~ Քաղաք,
 Վոր մեր յերկրի հեղաշրջման ընդվզումի յես մարմ-
 նացում,
 Ուր այս յերկրի պատմությունը աճել, սնվել ե՛ քո
 ծոցում՝
 Ունիս արդյոք կանաչ, փողոց, վոր արյունով չլինի
 ներկված,
 Ունիս անուն մի հերոսի, վոր չհիշի այսոր ներկադ:
 Միակ քաղաքն այս աշխարհում, ուր ամենից, ամե-
 նից շատ
 Տեսել ես հար ու անընդհատ կռիվ, պայքար ու բար-
 ըիկադ:
 Ո՛ր, և վորքան թույն ես ըմպել տիրող որե՛նք ու
 կարգերից—
 Ձո՛հ անկումի և գեղխության, վոճիրների ու կրքերի:
 Բայց և ինչպե՛ս մնացել ես անխոցելի, անպարտի պես,
 Վորիդ առաջ խոնարհվում ե այսոր աշխարհն մի
 մարդու պես.

Այ իմ ջահել գեղեցիկուհի, մնացել ես անապական,
Յեւ ըն խաղաղ վեհության մեջ—վորպես գալիք մեր
սպազան:

Դրան համար չափչփում եմ փողոցներդ խենթի նման
Ու չեմ գտնում իմ կարոտին, զմայլանքին վնչ մի
սահման:

Ագահի պես ծծում եմ յես ողբդ խոնավ ու ներս տա-
նում,
Կարծես թուլնից նիկոտինի արբենում եմ—չեմ կըշ-
տանում:

Ի՞նչ կա ըն մեջ, Լենին-Քաղաք, այդ ի՞նչ հմայք ու
բուլբուռ ունես,
Վոր գեղատես աղջկա պես, յերբ նայում ինձ—փայ-
լում եմ լես:
Կա մի չքնաղ խոր վեհություն լուռ նեվայիդ վոլորտ-
ներում:
Խորհրդավոր գրավչություն ըն համակարգ փողոցնե-
րում:

Կախարդիչ են գիշերներդ և՛ մայիսին և հունիսին,—
Մի-մի փերի սքանչելի—լույս շղարշում արշալույսի:
Վոչ արև կա, վոչ ել լուսին, բայց և լույսի մի ջերմ
կարոտ
Ձգում ե քեզ և չգիտես, գիշեր ե այս, թե առավոտ:

II

Լենին-Քաղաք,
Յես խենթի պես չափչփում եմ փողոցներդ ագահաբար,
Պրուպեքտներդ յերկարածիգ, սկվերներդ վանդակա-
պատ:
Պալատներիդ ճակատներին պահակ-սյուլներ կան հո-
լանի,
Վորոնք կասես հսկա բամբուլ, ձիգ քնարի լարեր
լինին:

Յեւ մայիթերդ ալ-գրանիտ, և պատիրդ արյան գույնի,
Յեւ արևդ կուճաչային, արևմուտքդ կաս արլուհի:
Նրանից չե՞, արդյոք, վոր դու շատ ես ծծել այս վայ-
րերում
Խիզախ, ըմբոստ մարտիկների—բանվոր մարդկանց
կարմիր արլուհի:

Հրեն ըն մեծ ու լայնարձակ աղմկալի Զնամենկան,
Այստեղ քանի՛ իմաստ խորին, վառ հուշերի դրվագ-
ներ կան:
Դիմյանն այստեղ ցարի անունը քարին գրեց—տա-
պանագիր,
Ծաղրի հանեց Պուգալոին*), վոր իմանա ամբողջ
յերկիր:

*) Պուգալո—խրտվիլակ, փորագրած եպիգրամ Ալեքսանդր
Կերրոզի արձանի պատվանդանին Հոկտեմբերյան հեղափոխու-
թյունից հետո:
Մ. Հեղ.

Աղատութիւն կոչ ավետեց յերկրին այստեղ կարպը
կազակ,
Յերբ հասցրեց լիբբ սպայի պիղծ կզակին հնչուն
ապտակ.
Ազդանշան եր դա մի նոր, թե դիմանալ այս ուժիմին
եւ չի կարող վոչ մի բանվոր, սալբաթ, անգամ կա-
զակ հիմի:

Յեւ Պոլգալոն, վոր կքված եր իրա պոչատ ավանակին
ինքն եւ խոշոր մի ավանակ—ցնցվեց դադող են ապ-
տակից,
Բայց և նորից արձանացավ ու քարացավ տեղն ու
տեղին.
Չի վոր սա ծանր մի ապտակ եր Ռոմանների ամբողջ
ցեղին:

III

Փետրվարից մինչ Հոկտեմբեր զգում եյինք մենք
մեզ այնպես,
Ինչպես իբ հոր տանից քշված մի խորթ զավակ,
տնանկի պես.
Ինչպես հողից ու արմատից տեղհան արած կանաչած
ծառ,
Ինչպես ամպով ծածկված արև, վոր զրկվել է լույ-
սից պայծառ:

Բայց, դե, գիտես, բանվոր ախպեր, Հոկտեմբերի հա-
լալ զավակ,
Վոր բոլշևիկն անկարող ե հանգիստ մնալ զուսպ ու
հավաք,
Մինչ չքանդի նա իր շղթան, մինչ բռնությունը
չդադարի,
Որ ու գիշեր կպայքարի, մինչ վոր կամքն իր կատարի:
Ու մի ոք եւ Պուտիլովը հազարաշատ մարտիկներով
Գրկեց, ձուլվեց Ոբուխովին ու Նարվային կուռ շար-
քերով.
Ու չքացավ Պետրոգրադը Հոկտեմբերյան մի գիշե-
րում...
(Մնացել է այս անունը մեղկ Կերենսկու լոկ հուշե-
րում):

Գնդակը չեր հրաջք գործող այդ գիշերին Հոկտեմբերի,
Վոչ եւ սվինն ու գնդացիք, վոչ վորոտը գոռ ումբերի.
Հաղթանակեց այդ գիշերին յերկրի կամքը, յերկրի
պոռթկում,
Վոր խտացել, կուտակվել եր բանվոր մարդկանց ցա-
կոտ սրտում:

IV

Լենինգրադի փողոցներով ալ ու շքեղ կարմիր ու վառ
 Քալլում եմ լես ամենայն որ, վորպես դյուլթված մի
 սիրահար,
 Յեվ վոր կողմից անցնում եմ լես—ալետեղ մարդ-
 կանց ծփում ե ծով,
 Յեվ ուր նայում—համակվում եմ համակրանքի խոր
 ակնածով:
 Զգում եմ, վոր թեև ալստեղ չեմ մասնակցել Հոկ-
 տեմբերին,
 Բայց իմ հոգին կռիվ տենչող՝ մասնակցել ե այդ մեծ
 որին.
 Զգում եմ, վոր թեև ալստեղ չես չեմ թափել կաթիլ
 արյուն,
 Բայց կյանքումս նրա համար այրել եմ վողջ իմ
 խանդ, ավուն:
 Հրեն անցավ կոմսոմոլկան կաս ու կարմիր թաղի-
 նակով,
 Շտապում ե նա գործարան, կասես վառված հուր-
 կրակով.
 Կերևի վոր այսոր պիտի նրանք ձուլեն Դնեպրոստ-
 րոյին:
 Հարյուր հազար քիլովատի քայլերդ զնգող մի մեծ
 սուրբին:

Դյուլթել են ինձ մուգ բրոնզից կարծես կերտած են
 ախտանը,
 Ո՛ր, գիտեմ, նա հանգիստ չունի թե զավողում թե
 իր տանը.
 Նոր գյուտեր ե նա հորինում, վոր լերկիրըն ազատ
 շնչե,
 Հոկտեմբերի ճակատը վես այսպես ծածկում ծաղկե-
 փնջով:
 Կաշվե բաճկոն ուսին քաշած ահա առույգ մի ծերունի,
 Խորշոմներով դեմքը նախշած, ի՞նչ ել շեշտված գծեր
 ունի.
 Յես կարդում եմ նրա դեմքին պոեմը այն կռիվների,
 Վեր վարել ե նա անկասկած շատերի հետ Հոկտեմ-
 բերին:

V

Լենին-քաղաք, սիրուն քաղաք, սիրում եմ քեզ
 խենթի նման,
 Ու չեմ գտնում իմ կարոտին, դմայլանքին վնչ մի
 սանձան.
 Սիրում եմ քեզ վնչ թե այնպես, վոր պերճ ես դու
 կամ շքեղ ես,
 Սիրում եմ քեզ նրա համար, վոր անունով ամեն
 տեղ ես:

Նրա համար, վոր քո գրկում պայքարել են հերոս
 մարդիկ՝
 Յեզ Դեկաբրիստ, Ռազնոչինեց, Նարոդովոյլ ու
 Բայլշեիկ,
 Կարակոզով ու Նեչաև, Ալեքսեև ու Խալտուրին,
 Պերովսկայա ու Ժելյարով, Ա. Ուլյանով, մեծն
 Լենին։

Նրա համար, վոր ստեղծել, կերտել ես մեծ դասի
 համար
 Մի սքանչելի, վսեմ պոեմ, մեջը շարած հակինթ,
 գոհար,
 Վոր ձուլվել ես քո մեծափառ Նեվայի հետ ու մեծացել,
 Ու փարվելով այս նոր կյանքին, ել ավելի դու վե-
 հացել,
 ...Վոր ճակատին քո տիտանի
 Վիճակվել ե գրած տեսնել բանվորական վողջ աշ-
 խարհի
 Ամենամեծ հաղթ Սիմֆոնին...

ԼԵՆԻՆԳՐԱԴՑԱՆ, ՊՈԵՄԻՑ

(Ֆրագմենտներ)

ԻՍԱԿԻ

(ԱՌԱՋԻՆ ՖՐԱԳՄԵՆՏ)

Մարմարաշեն կուռ պատերով ու սյուներով հողանի-
 Կանգնել ե նա—գոռ Իսակին—ժանտ պահակը կրոնի,
 Ամեն սյունը նրա տիտան—գրանիտե մի կոթող,
 Ամեն ճակատ մետաղաձուլ հորիելեֆներ են դյուլթող։
 Թե բարձրանաս նրա տանիք ու գմբեթը վերամբարձ՝
 Կհասկանաս թե քանիսի՛ նյութել ե նա մահ ու լաց։
 Ու կսոսկաս վողջ եյուլթյամբ, ու կժայթքի սիրտդ
 թուլն,
 Թե իմանաս հիմնարկումի նրա յեղեռն պատմությունն։

Ասում են թե տեղը նրա հազար դարուց ել առաջ
 Ծանծաղուտի, ճահիճների յեղել ե վայր մի անանց.
 Ու Պյոտրը ցար, խենթ ու խելառ, իբր քմայքով
 հհարկու
 Կամեցել ե այստեղ դառնալ մեծ տաճարին հիմնարկու։

Անծայր լերկրի վողջ ծայրերին տվել ե խխտ
 հրաման,
 Վոր աշխատող ձեռք ուղարկի ամեն մի գյուղ ու
 ավան՝
 Ու թափվել են այստեղ ճորտեր, հիմք են փորում,
 հողը թաց,
 Քայց ճահիճը թաց ե ու թաց, լերախը՝ լիճ, աչքը—
 բաց:

«— Վոր այդպես ե, թող գերանը աչքդ հանի, անզգամ»,
 Ասում ե ցար Պյոտրը համառ ու կատաղում այս
 անգամ.
 Գերանների անտառներ ե սրի քաշում անխնա,
 Բերում մխում հունը նրա, վոր ճահիճը չորանա:

Քայց ճահիճը թաց ե ու թաց, լերախը լիճ մեծացած՝
 Ջուրը յեկել ու լսեղողել ե արանքները նրա բաց:

«— Յեթե, ճահիճ, քեզ դեռ քիչ են գերաններն ան-
 տառի,
 Թող վորկորդ հիմա փակեն վոսկորները մարդկա-
 լին...»—
 Ու մարդիկ են նորից փտում մինչև կոկորդ ջրի մեջ,
 Ու այստեղ ել շիրիմ գտնում հազարներով ջրահեղձ:

Ու գոցվում ե աչքը ազահ ու ճահիճն ե ցամաքել,
 Չե՞ վոր այնքան դիակներ ե նա կլանել ու հագել:

Ո՛ր, Իսակի հիմքդ անտակ ու անհատակ յերախով
 Ամրացել ե բանվոր մարդկանց արյան թանձր շա-
 դախով.
 Այժմ ձայնը նրանց արլան, վորպես նշան բողոքի,
 Արձագանքով անդրյերկրյան կասասնի քո հոգին:

Դրա համար դու որեցոր իջնում ես խոր դեպի ցած*),
 Յերբ լսում ես անեծք ու լաց հազարների մահացած.
 Դրա համար յես ասում եմ, պիտ խորտակվես դու
 անհետ,
 Քեզ չի ոգնի վոչ մի Պյոտր... ու կրոնն ել նրա
 հետ...

*) Իսակի տաճարի հիմքը կառուցած լինելով ճահիճների վրա, շնորհիվ շենքի հսկայական ծանրության որեցոր իջնում ե ցած:

Մ. Հեղ.

ՊԵՏՐՈՊԱՎԼՈՎՍԿ

(Յեկրոդ Ֆրագմենտ)

Վորպես մի բիծ սև անցյալի—վոճիրների կառափ-
նատուն

Պաղ ջրերում լայն նեվայի դարանել ե վոխը սրտում.
Ո՞վ ե տվել նրան այնքան վրիժառու գազանի դեմք,
Վճր սատրապը, այն վճր արքան... Ելի Պյոտրը, կա-
տաղի դև:

Ու կանգնել ե դահիճի պես Բաստիոնը բանտարկումի,
Ճակատին ել ցցել մի սուր—նշանաբան գլխատումի.
Կարծես լարված ձիգ աղեղից վեր խոյացող հսկա մի նետ,
Վոր թռչում ե դեպի յերկինք ու ամպերում կորչում
անհետ:

Ու հսկում ե ժանդարմի պես աչքը հառած են մյուս
ափին,

Ուր Պալատն եր ձմեռային—ցարերի վորջն այն սար-
սափի.

Վնյ թե ազատ միտքը ճախրող խռովարկու վոգինների
Մութ արևին ժանդ ցարերի մի աղետ կամ փորձանք
բերի:

Պետրոպավլովսկ, դու նման ես հսկա գանգի մութ
գիշերին,

Բո փոս ընկած խոռոչներով, քո արնակալ հուր աչ-
քերով.

Ամեն խուցղ քարի դազադ, կամարահուպ մի դամբա-
րան,

Ամեն սյունդ ժանդարմների ու ցարերի լոկ հենարան:

Այստեղ, քարե քո վանդակում կարոտ լույսի, ազա-
տության

Թառամեցին ծաղկահասակ Չերնըչեվսկի և Նալբան-
դյան.

Ու քանիսը խելագարված մոնչացին առյուծի պես,
Թույն ըմպեցին ու կախվեցին... ու ճարվեցին ճրա-
գի պես:

Յեվ իզուր չեր, վոր Ավրորան հենց առաջին ազատ
որին

Պատերիդ տակ ճայթեց ուումբեր ու վոդլունեց չոկ-
տեմբերին:

Պետրոպավլովսկ,

Այդ խտացած մեր վրեժն եր ընդդեմ քո բյուր վո-
ճիրների,

Այդ կուտակված մեր ցասումի մահազույժը դահիճ-
ների:

ՉՄԵՌԱՅԻՆ ՊԱԼԱՏ

(Յերբող Ծրագրեան)

Ձմեռային գու գոռ պալատ, վոր ձգվել ես այդպև
 հպարտ,
 Վոր գիշատիչ բազելի պես թևերդ գորշ փոել ազատ
 Բո փառքը չե, վոր պիտ յերգեմ, վոչ ել շուքդ յես
 գովերգեմ,
 Այլ անցածդ ճանապարհը անա պիտի նշավակեմ:
 Անփառունակ, գոռոզ պալատ,
 Բո ծոցումն ել թուլն են շնչել քանի՛ դավեր, քսնի՛
 վոճիր
 Մինչ վոր վերջին շունչը փչեր Նիկողայն տխմար
 վերջին,
 Ո՛ր, և քանի՛ կտրիճների հանել ես դու մահավճիռ,
 Բանի՛ լուսե մտքի ջահեր հանգել են քո լոկ մի
 շնչից:
 Նրանք, վորոնք պատվով տարել դրոշը մեծ գաղա-
 փարի,
 Նրանք, վորոնք զոհեր շարել ազատության ճանա-
 պարհին:
 Յեվ Ռըլեկ և՛ Կախովսկի և՛ Մուրավյով-Ապոստոլն
 այն,
 Վորոնք ընկան փտած թոկից հրապարակում լայն
 Սենատի,

Յերբ Նիկողայ առաջինը դարանակալ վագրի նման
 Պատերիդ տակ մունչալով դողը բռնած տվավ հրաման,
 «— Դեկտեմբերյան ցնդվածներին ի կախազան տա-
 նել դատի...»
 Վոճիրն չեր քո առաջին, Ռոմանների դու դարձ պալատ,
 Բայց սա դարձավ փառքը վերջին քո տերերի նախ-
 կին անպարտ:
 Յերբ հիմքիդ տակ արյունաներկ սալերն անգամ
 գրանիտե
 Մուրավյովի հետ միասին հառաչեցին ու սասցին՝
 «Իժմախ յերկիր, խեղճ Ռուսիա, ուր կախելն իսկ
 կարգին չգիտեն...»
 Վերջին նախճիր ու վոճիրդ վոճիրների մեջ բյուրա-
 վոր
 Այդ հինգ թիֆն եր, դաժան պալատ, հունվար իննը—
 սոսկումի ուր:
 Յերբ Նիկողայ արյունարբուն յերեկեցավ պատշ-
 դամբիդ
 Ու արնաշերտ մի գիծ թողեց—վերջին գիծը անցած
 ճամբիդ:
 Յերբ Պուտիլով հացի համար վոտքի յելավ... իսկ
 ցարն անգուլթ
 Յորենի տեղ «ըմբոստներին» արճիճների մաղեց
 կարկուտ...»

Բայց և այդ նույն պատշգամբեն մաղթանքներով
 ճամբեց ռազմի
 Բոլոր նրանց, վորոնք յեւան են սև տարին պատե-
 րազմի:
 Վոճիրների դու վորջ պալատ, մի տեղ գնդակ, մյուս
 տեղ որհնանք:
 Սրտումդ ան ու ծոցիդ մահ... հիշատակիդ արգահա-
 րանք:

* * *

Այսպես անա յերեք ճիվաղ, յերեք հրեշ ու բռնակալ
 Ձեռք ու մեջքով հենակ-ողակ, բորսան նեցուկ արած
 իրար՝
 Մեկը Դրակոն, մյուսը Ցերբեր, իսկ յերրորդը Աֆիո-
 նի թույն
 Գիշեր ցերեկ մահ են նյութել—մի համերաշխ յեր-
 րորդութուն—
 Վոր հանգցնեն խավար շնչով ինչքան լույս կար են
 մեծ յերկրում
 Ինչքան կրակ աղնիվ ու վեհ խռովարկու հուր սրբ-
 տերում:
 Ահա ինչու մեծ նեվայի մրմուռ ջրերն ավուր, վրդով
 Թախծում են ձիշտ ու մրմնջում մեծ հանճարի
 են մեծ սրտով:
 Ահա ինչու նրա ափից ազատ յերգով ու բերկրանքով

Պուտիլովը կրակ ժայթքեց հուր-աչքերից հոխորտան-
 քով:
 Յեվ պալատը Ռոմանների, ուր տիրում եր մահ ու
 շիրիմ,
 Այդ որվանից դասակարգի դարձավ մուգեյն հավա-
 տարիմ:
 Յեվ պալատը, ուր թնդում եր կախաղանի դատավճիռ՝
 Այսոր խրոխտ իր ճակատին կրում ե հաղթ դրոշկարմիր:

ԱՃՈՒՄ ԵՆՔ...

Հիմա մեր յերկրում բոստանների տեղ
 Ագարակներ կան,
 Յեվ Շուշիկի տեղ՝ կոմյերիտուհիք—
 Կարմիր գլխարկով,
 Այնտեղ ե հիմա աճում ու ծաղկում
 Մեր լույս ապագան—
 Առատաբերող կոլխոզնիկների
 Կայծակե կամքով,

 Մեր յերկրում հիմա ցանքը բամբակի
 Ու ճակնդեղի
 Լեզու լեն առել, ճառում են խրոխտ
 Մեր բերքի մասին,
 Յեվ սովխոզները շուրջը բոլորած
 Բաղաքի, գյուղի՝
 Արև են վառել սոցիալիստական
 Նոր արշալույսի,

 Հիմա մեր յերկրում տախտակի, գյաջի
 Բուլջոն ե դեռ բուրում,
 Ուր իրար հետքից, ֆարրիկներ, տներ
 Աճում են շարքով,

Ուր Ձորագետը Լոռու սարերի
 Կատարն ե քերում
 Իրա առյուծե բետոնի զանգված
 Թոխք-խոյանքով,

 Մեծ ե աճը մեր, ու հեքիաթային—
 Դարեր չեն տեսած,
 Ու դարերով չե, վոր աճում ե մեր
 Աճը հաղթական,
 Մեր հերոսները խանդավառության
 Արբունքին հասած՝
 Իրենց ջղերից հլուսում են այսպես
 Մեր լույս ապագան,

 1930

ԶԱՐԹՈՒՑ

Արթնացել, վողջ Կովկասն ե դարձել մի Զագես,
 Շիր-կանալ,
 Վողջ չերկիրը փոթորկել աշխատող ձեռքերի ալիքով-
 Յեզ գեղջուկ և՛ բանվոր կանչում են մեզ այսօր
 հասկանալ,
 Վոր կյանքը յերկնել ե մի բեղուն հիասքանչ գալիքով-
 Կովկասն ե արթնացել. նա յիցեք, ահա նա, Վրաստան—
 Թասակրավ մի գյոզալ—վոսկեհուռ ճակատին փունջ
 աստղեր.
 Զյունաթույր բամբակի թփերով պճնվել ե Հայաստան,
 Յեզ Բազուն նավթերով քահրուբար CCP-ն զարդարել:
 Կանգնել եմ պահակի իմ գիրքում չերփնեբանգ այս
 Փոնի.
 Զկա ջիդ՝ չխոսի, չկա միտք՝ չհորդի խլրտում.
 Բյուրավոր ձեռքերի ալիքով հլուսվել ե սիմֆոնի
 Միլիոն ձայն ու հնչյուն, միլիոն շեշտ—համերգի
 հունդում:

Ու տեղի չե տվել մի ցնծում, վոր յերկիրն ե ցնցում,
 Ամենուր ողի մեջ հոնդում հե ի շունչ մի մրցում.
 Յեռանդի յին յեկել բահն ու թին, քլունգներն, մե-
 քենան,
 Լսում եք, ասում են՝ այսուհետ թող ամենքը հագե-
 նան:

Արթնացել, վողջ Կովկասն ե դարձել մի Զագես,
 Շիր-կանալ,
 Ապրում ե իր եպոսն կերտումի... Հեյ, ով չե հաս-
 կացել՝
 Թող նետվի ու ձուլվի այս կովին հաղթական, շի-
 նարար.
 Ստեղծող Կովկասի փոթորկող մեծ ծովերն ենք ան-
 ցել...

ԿԱՐՄԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՄԵԼՈՂԻԱՆԵՐԻՑ

I

Բ ա գ ու

Յե՞ս անցա աշխարհով նավթերի
Ու տեսա նրա փառքն ու հմայք,
Աչնտեղ մարդն հանճարով անթերի
Կերտել է հրասքանչ մի նոր կյանք:

Հորիզոնը նրա ջինջ հեռավոր
Հյուսել է դյուլթական պալատներ,
Ողի մեջ կախվել են բյուրավոր
Բազմահարկ, նորաշեն հաղթ տներ:

Յե՛վ ապա մշուշոտ վիշկաներ,
Յերկաթի ռեզերվար ու չաներ,
Ծխաններ, ծխաններ, խողովակ,
Ու բանվոր շենքերի նոր-քաղաք:

Ու քանի միլիարդներ անհաշիվ
Այս անհագ Ափշերո՞նն է կերել,
Այստեղ են արշիննիկ Մանթաշե,
Խոհարար Ծատուրովը մառդ դառել:

Ու այստեղ են ապրել Շահումյան,
Ալյոշան, Ազիզ-բեկ, Սպանդար,
Այստեղ են պայքարել աննձան
Գսանվեց բայլընիկ կոմմունար:

Մեռել են նրանք վաղ հասակում
Հրածին քաղաքի անունից,
Ու ծածկել անթառամ պսակով
Ճակատը իրենց վես կոմմունիստ:

Մինչև վոր արչունով նրանց թարմ
Նոր Բազմի հիմքերն են ամրացել,
Հե՛լ, գիտցե՛ք, այդ որից իմ փարթամ
Հայրենիքն Սովետյան է դարձել:

1925

II

ԳԹԱՆՁԱ

Ի՞մ հայրենիք վոր դարավոր
 Խավարի մեջ աչքերդ եր կուրացել,
 Վոր դատելու մութը լուսից
 Վաղուց եյիր անընդունակ դու դարձել՝
 Այսոր անա ամենից շուտ
 Դո՛ւ յես, դո՛ւ յես, ի՞մ աչքի լույս, արթնացել,
 Այսոր անա սիրով անսուտ
 Վողջ կովկասը քեզանով ե հիացել:

Ի՞մ հայրենիք, հացդ համով,
 Խաղողդ մեղր, այգիներդ մուգ մախմար,
 Ի՞մ յերգերը այս անգամ ել
 Խինդ ու ծափով յես հյուսում եմ քեզ համար:
 Վոր ամենուր շաղ ես տվել գոհարափայլ
 Գործարաններ, հիդրո-կայան, նոր շենքեր,
 Ձեռքդ մեկնել յեղբայրարար
 Մեծ միության, դարձել նրան լավ ընկեր:

Ի՞մ հայրենիք, չինարներդ դարավոր
 Շահ-Աբբասի ձեռքով տնկած խնամած՝
 Նրա անհաս բարձունքներին հեռավոր
 Ապա խոսքս ուղիտ-կանչով չնվ արա՝

—Մեծ հունար չի ծաղկած լերկրում
 Հանդես բերել հրաշքների բյուր զեղում.
 Հունարն այն ե, ավեր յերկիրն
 Ավանդ անել Գյանջու նման մի տեղում...

1925

ՀԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԲԱԼԼԱԴԱ

Ասում են տարին մի քանի անգամ
Քուռն ե կարմրել արյան շերտերով.
Արյան շերտերը առուի նման
Մետեխի ժայռից ծորել են հերթով:

Ասում են արյան ամեն մի կաթիլ
Թույնի յե փոխվել ժայռից ծորալիս.
Ու դահիճներին խեղդել լերկաթի
Իր ողակներով ցասկոտ թունալի:

Ամեն առավոտ պաղ լուսածեղին
Ասում են Քոի ջրերը պղտոր
Բողոքի շեշտով արյունոտ յերգի
Ալեկոծել են ափերն անգորր:

Թե այդ բողոքի ալիքները գիծ
Թիֆլիզն ե ցնցել իր խուլ թաղերով.
Յերգվել են թաղերն լուծելու վրեժ
Մահապարտների թափված արյունով:

Ասում են տարին մի քանի անգամ
Քուռն ե կարմրել արյան շերտերով.
Արյան շերտերը հրդեհի նման
Քաղաքն են վառել իրենց հուր յերթով:

1933, Քեֆլիզ

ԿՐԵՄԼԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Յեվ ինչպես կանաչ—անտառի միջում
Մորիկ ու վորոտ ծառս-ծառս լինելին՝
Այնպես ել նրանք Կարմիր դահլիճում
Դիմավորում են մեծն ՍՏԱԼԻՆԻՆ:

Հազար հրրանոթ, հազար գնդացիք
Ցնցում են կարծես դահլիճն անծիր,
Սալյուտ են տալիս զորավարին վես—
Նոր զերադարձած հաղթանքից կարծես:

Իսկ նա ժպտում ե, գոհ ե, աներկբա
Յերկրի այ շրվա ծաղկած վիճակից.
Նախկին տապնապր այլևս չկա—
Ապահով՝ յերկրի սահմաններն ու գիծ:

Յեվ դեմքը խրոխտ մեծն ԼԵՆԻՆԻ,
Վոր լույսերի մեջ բեմուճն ե բազմած՝
Նույնպես ժպտում ե նման ՍՏԱԼԻՆԻ—
—Վեց յերդուճն արդեն պատվով կատարած...

Փետրվար. 1936 թ.

ԱՅՍՊԵՍ Ե ԼԻՆՈՒՄ

Կարիքը մարդուն առյուծ է շինում,
 Ուր նա ջարդելով վանդակը իրա՝
 Ահեղ մոռնչով փողոց է յելնում,
 Խոլանում տանջող իր տիրոջ վրա—
 Կործանում նրան.

Սարկուլոթյունը—առյուծ է ծնում—
 —Այսպես է լինում

Զրկանքը մարդուն հերոս է շինում—
 Գետնահարկերում աշխատող խլուրդ,
 Գործարաններում միլիոններ զինում,
 Ցասկոտ վրեժին իր տալու հագուրդ...
 —Ու կապիտալը՝ իր գերեզմանում...
 Կեղեքչի վերջը այսպես է լինում:

Ի՞նչ է տալֆունը չինական ծովում.
 Կամ ի՞նչ սամուրը անապատներում.
 Հեղափոխության որենքը արդար
 Խորտակելու յե ֆաշիզմը վատթար
 Թող խնդան այսօր Տոկիո, Բեռլինում,
 Վաղը պիտ լացեն...—Այսպես է լինում...

ՊԻՈՆԵՐԸ

Հայրը—բանվոր էր մի մեծ արտելում,
 Մայրը—կար անող գործարաններում.
 Տանը տատի մոտ փոքրիկներ էլ կան,
 Մեկից սկսած մինչ վեց տարեկան:

Մի մանչ ունեյին—կարմիր պիոներ,
 Նիհար ու սևուկ, կայտառ ու ժպտուն.
 Բարակ թուխ վզին ալ փողպատ ունեք,
 Ամեն որ ժամի մեկին կերթար տուն:

Տուն դառնալիս չեր շտապի յերբեք,
 Նա կանգ կառներ մի քիտակի առաջ.
 Ափի մեջ սեղմած մի քանի կոպեկ՝
 Գրքեր կընտրեր աչքերը չռած:

Այդ կոպեկները հայրը ամեն որ
 Տալիս էր նրան, Վոր նախաճաշի.
 Իսկ նա գրքեր էր գնում նորանոր,
 Նախաճաշելը թողնում ղւրիշին:

*
 *

Յես էլ ամեն որ աղատ ժամերին
 Կերթալի քիտակ - գնել լրագիր,
 Ու ամեն անգամ մեր պիոներին
 Կհանդիպելի այն հետաքրքիր:

Մի որ ել տեսա յես աճն մանչուկին,
Մեկ քիոսկին եր նայում վարանոտ,
Մեկ ափրն սեղմած յերեք կոպեկին—
Ուզում եր գնել մի գիրք անծանոթ:

— Ինչո՞ւ յես, բնլաս, այդպես վարանել...
— Հրեն են գիրքը ուզում եմ գնել,
Միայն թե թանկ է,— գինը հինգ կոպեկ,
Իսկ մոտս ունեմ յես միայն յերեք...

Հանեցի տվի պակասած վճար.
— Շնորհակալ,— եմ ասաց մանչուկը,
Վաղը կրեբեմ պարտքս անպատճառ,—
Ու մտավ քիոսկ, գնեց գրքույկը...

*
* *

Անցան տարիներ ու մի լավ որ ել,
Յերբ մանչուկը իմ հասակ եր առել՝
Տեսա յեկել է նա գրադարան,
Մոտեցա ու հարց տվի յես նրան:

Դե, ասն բնլաս, քանի՞ գիրք ունես,
Այնպես մանկական ու եժանագին.
Յերևի արդեն, վորքան գիտեմ յես,
Մեծ գրադարան ունես ահագին...

— Ունեյի գնած յերկու հարյուր գիրք,
Բայց նվիրեցի մեր կոլեկտիվին.

Վողջը կարգացել հիշում եմ անգիր,
Ասի— հիմա ել մեր բազան ոգտվի...

Չասեմ բախտավոր ու մեծ է յերկիրն,
Ուր մանուկներն են այդպես մտածում...
Իմ ջահել գրիչ, հիմա ել չերգիր,
Մեր նոր սերնդի մաքի խոյացում...

1934, զեկտ. 2.

ՔԱՌՑԱԿՆԵՐ

I

Իմ յերգը

Սանահնի կարծր քարից ե կռած իմ շենքը.
Ագարայի շաքարից ե ձուլած իմ յերգը.
Ով դեռ կովել չգիտե՛ թող գա ու սովորի,
Դասակարգի պայքարից ե ծնած իմ յերգը:

II

Այդպես իմացիր...

Ամեն քար—քար չե, ամեն բար—բար չե,
Ամեն մի մանյակ՝ հակինթի շար չե.
Ճամբիդ տեսար ո՞՞՞ ջախջախիր անցիր,
Ոճը—չար ե, նենգ... այդպես իմացիր:

III

Շաքը գնացել...

Ջրի հայելում պատկերս տեսա—
Ճերմակել եյի ու շատ ծերացել...
Աշնան մի ծաղիկ կողքիս փսփսաց.
—«Շատը՝ գնացել—քիչն ե մնացել...»

ՊՈԵՄՆԵՐ

ՆՈՐ ԱՌԱՎՈՏ

(Stella 16)

Ա ռ ա ջ ի ն մ ա ս

I

Ահա իմ մուսան կյանք առավ նորից
 Յեվ պատանեկան աշխույժով յեռուն
 Խոսեց սրտիս հետ անցած որերից—
 Անցած որերի հմայքը սիրուն.
 Որեր, վոր անցան ծաղիկների մեջ,
 Լի վայելքներով անմեղ մանկական,
 Որեր՝ վոր անցան շարեշար, անվերջ,
 Բուռն հույսերով պատանեկական,
 Յեվ ի՞նչ ե կյանքը... մի յերգ դյուլթական,
 Վոր կրկնվում ե հիասքանչ, թովիչ
 Յելեկներով, յեղանակներով,
 Վոր հնչում ե այնպես գրավիչ
 Ու մարում ցավի արձագանքներով...
 Կյանքը մի նկար, վորը հյուսվում ե
 Հազար գույներով, հազար ցուլքերով,
 Կյանքը հսկա ծով, վոր փոթորկում ե,
 Նավեր խորտակում ու վերջը մնում
 Մենակ ու ախուր իրա խոհերով...

Ահա իմ մուսան տեսնում եմ նորից
Տանջված անցյալի ծանր յերկունքից
Պոեախա ծնեց կյանքի նոր գարուն—

Մի պատկեր սիրուն.

Պատկեր մի կույսի, վորին շատ վաղուց
Վորոնում էյի, բայց չեյի գտնում,
Նա մի իդեալ, վորին հինավուրց
Յեվ տեսնում էյի և չեյի տեսնում,
Վորին լես ձգտում՝ բայց չեյի հասնում...

II

Այժմ ահա նա... տեսնում եմ, զգում,
Վոր իմ հոգին է նրա մեջ ապրում.
Վոր իմ և նրա հոգու ծալքերում
Կան մի հարազատ իրար նման գիծ՝
Խորը ակոսված միատես ցավից...
Քաղցր է, քաղցր, յես չեմ կշտանում
Նրա գրավիչ, խոսուն աչքերից,
Յեվ ամեն անգամ մի բան եմ գտնում,
Մի միտք հղանում նրա պատկերից,
Յերբ ուշքս լարած նայում եմ նորից.
Ա՛խ այն աչերում մի ամբողջ աշխարհ,
Ա՛յն թախծոտ շուրթին մի ցավոտ ժպիտ,
Իսկ հրապույրը գեմքի վշտահանր...
Զգում ես, վոր նա կրել է մի վիշտ,
Մի խոր, անհուն վիշտ, վորը չգիտես
Ո՛ւր է վերջանում, նրան ուր տանում,

Կամ ինչո՞ւ հոգիդ այնպես տատանում.
Ու մտածում ես, ու մտածում ես՝

Յեվ չես հասկանում...

Զգում ես, վոր նա մատաղ հասակում
Շատ է տոկացել, շատ է դիմացել,
Ու թեև նրա կյանքը ծաղկալից
Հողմերի տակ է մնվել, մեծացել՝
Բայց ելի անցած վշտերի բովից
Մի գեղեցիկ բան դարձյալ մնացել
Ո՛, յես սիրեցի՜ այդ նազան կույսի
Շողը յերեսի.

Քանի նայում եմ—ել չեմ կշտանում,
Զտեսած ժամին խորը վշտանում,
Կարծես կորուսած մի անձ թանկագին
Նրա սուզըն է սրտիս ծանրանում:
Ահա յես մենակ սպասում եմ լուռ
Ամեն մի բույս, թե հա՛, պիտի գա
Ու բանա իմ տան դռնակը տխուր,
Յեվ իմ առջև կանգնի հեկեկա,
Կանգնի ու ասի՝ տես՞մք վոր լեկա,
Յեկա գիտնալով, վոր կրակի պես
Հալվում ես մենակ... լեկա վոր շոյեմ
Ճակատդ տխուր ու քեզ փայփայեմ,
Վոր սրտիդ ցավը հեշտությամբ տանես
Ու տեսնես, վոր լես այնքան ել անգութ,
Այնքան ել քար չեմ, ինչպես կարծում ես...

Ու յերազի պէս անորոշ ու մութ
Ասես ու գնաս, ասես ու գնաս՝
Ու մեկ ել տեսնեմ, վոր դու ել չկաս,
Վոր դու ել չկաս...

III

Տեսնում եմ նորից քո մեն սենյակում
Նստել, դիտում ես աչքերով թագուն.
Միրում ես դու ինձ թե հոգիս գննում—

Այդ չեմ հասկանում:

Այդ խորհրդավոր լռակցաց ժամին
Քո հրապույրն եմ յես միայն դգում.
Կյանքի արեք իրա իմաստով
Զգում եմ, աչքիս հմայք է առնում
Ու շոյող անուշ մի ճառագայթով
Հարվում ու ձուլվում իմ հոգու խորքում:
Հա՛, դու նայում ես յերկար ու թաղուն...
Աչքերդ կարծես տերևով ծածկված
Մի աղբյուր լինի, վոր ուղի բացած՝
Տերևի տակից գնում է, հոսում,
Նայում յերեսիս, սրտիս հետ խոսում.
Ու յես ծարավի տապ մարող ջրիդ,
Ու յես կարոտի մաքուր բյուրեղիդ՝
Ընկնում եմ լանջիդ, վոր սիրտս բացեմ,
Փղճրկամ կրծքիդ, ցավս կուշտ լացեմ՝
Բայց մեկ ել հանկարծ աչքես չքացած,

Վորպես մի այծյամ սարն ի վեր յելած՝
Տեսնում եմ, ավանդ, վոր դու ել չկաս,
Վոր դու ել չկաս...

Ո՛ր, այդ աչերը այնքան գրավիչ—

Կարծես պուրակում մարգարիտ-ծաղիկ,
Հեռուն ցնորող, բայց կյանքի կարոտ,
Ինձ խոստանում են մի նոր առավոտ:
Զգտում են նրանք ինչ վոր անհայտի,
Կարծես վորոնում մի աշխարհ գաղտնի,
Գաղտնի մի աշխարհ, ուր յեթե հոգին
Յերջանիկ զգար ու շուտ մահանար՝
Վնչ մի ափսոսանք չեր առաջանար
Զգտում են նրանք, վորոնում մեկին:
Գերբնական աչեր, դուք սկսեք ուղում
Գուցե յերջանիկ կյանքը յերադում,
Կյանք իմաստալից, կյանքը իրական,
Կյանքը կյանքի մեջ գաղափարական,
Լի հուզումներով, ցանկություններով
Յեվ յերջանկության փոթորիկներով...

IV

Յեվ յես վաղուց ե հեռու կարոտի
Մի ցավ եմ գգում իմ ցավոտ սրտում.
Յեվ յես վաղուց ե սիրո անտիժի՝
Նրա գող ու հույզն էյի կարոտում.
Արթնացավ իմ մեջ նա մի նոր ուժով,
Միրտս լըքցրեց այնպիսի հուզում՝

Կարծես վերավոր մի խոցի մրմունջ,
 Կարծես փայփայող կանացի մի շունչ
 Վողջ ելութունդ շոյում, գուրգուրում

Ու հոգուդ բերում

Մաղկունքից բուրոդ մի քաղցր գրգիռ,

Մի անուշ թմբիր...

Յեվ այդ ժամերին մի կյանքն ինչե՞ն,
 Հարչուր կյանք թե տամ այդ բախտին՝ քիչ ե.

Ու յես իմ հոգու ուժերի թափով,

Վոր խտացել է ծով-սրտիս խորքում,

Ուզում եմ քեզ գամ ճիչ ու սարսափով

Ու ալիքի պես ծնկներդ փարեմ,

Վոտքերդ մարմար գրկեմ, համբուրեմ,

Ասեմ՝ իմ անգին, այսպես իմ կյանքում՝

Յես դեռ չեմ սիրել, բայց պիտի սիրեմ,

Ու մեկ ել աչքս յես վերև հառեմ,

Տեսնեմ ինձ մենակ, իսկ դու ել չկամ,

Թռել ես, մարե՛լ, վորպես խոլ յերազ...

V

Ու վերջին անգամ տեսա, նազելիս,
 Հազար պչրանքով, հազար թովչանքով.

Տեսա քեզ մենակ սիրտդ հուզվելիս

Մտախոհ ծովի բուռն հորձանքով,

Գլուխդ չես տարած, մազերդ ցիրցան,

Հուսահատ թափով ջրածգական

Ձեռքերդ ջարդում, մատներդ սեղմում,

Արդյոք հում մասին ես դու մտածում.

Հայտի՛, անհայտի՛, ներկա մի անձի՛,

Թե՛ մի ցնորքի.

Տեսա քեզ ինչպես լարած միտք ու խելք

Ուզում ես գտնել կասկածիդ մի յեւք...

Ու մի սիրալիւր ժպիտ իմ բաժին

Պայթում է հանկարծ շուրթերիդ ուժգին,

Չարի, բարի ուժերն են կովում,

Թե՛ ճանապարհիդ վարդերը փովում.

Ներկայի փշեր, անցյալի հուշեր,

Թե՛ դեռ անորոշ մի համր գիշեր...

Յեվ մտածում եմ. գուցե՛ սա ունի

Հեռու աշխարհում իղեալ սիրուն,

Գուցե փայփայած մի անհնայտ ունի

Գերմարդ կոչվելուն հպարտ աքժանի...

Ասա, իմ սիրուն, իմ հոգու պատկեր,

Ո՞վ է այն հսկան, վոր կարողացավ

Քեզ լինել ընկեր.

Ո՞վ այն տիտանը, վորին հաջողեց

Տիրել քո սրտին, իշխել քո մտքին.

Ո՞վ այն յերկինքը, վորը խիզախեց

Ամփոփել իր մեջ քո ովկյան հոգին...

Կյանքի ծարճվը յեսականության,

Անհաս թո՛ւնքը բանականության,

Արդյոք աշխարհիկ վայելչությունը,

Թե՛ փարթամ կյանքի սին կերու խումը...

Ո՞, թե՛ նա տեսներ իմ ցավ ու թախիժ՝

Քեզ ինձ կթողներ այն հեռու տեղից,

Քեզ ինձ կթողներ վոչ թե անձնական

Լող բախտիս համար—իբրև կարեկից,
 Այլ ձեռքդ առած, իբրև թևակից—
 Աշխարհ կերթայինք կյանքը մտնելու,
 Մեր միտքն ու հոգին մարդկության տալու:
 Յեզ, ասա, ինչո՞ւ մի ձայն հալթական
 Վորոտի նման ինձ ե թելադրում,
 Վոր դու միայն իմ աշխարհն ես սիրում:
 Կամ ինչո՞ւ սիրոսս հուժկու ձայն առած՝
 Աղաղակելով միշտ նույնն ե ասում,—
 Վոր քո խելացի աչքերը անուշոյ,
 Վոր քո այդ աղնիվ ժպիտը քնքուլոյ,
 Մեկին սիրելու համար չեն ստեղծված:
 —Ծնված են նոքա ամբոխի համար,
 Նոքա ծուխըն են տառապած կյանքի,
 Նոքա ծնունդ են մի այլ աշխարքի,
 Յեզ թող վոր ապրեն մարդկության համար՝
 Ո՛ր, յեթե փլչի իմ գլխին կամար,
 Յես չեմ հավատալ, չես չեմ հավատալ,
 Վոր հոգիդ պայծառ և սիրտդ ազատ
 Կարենա գերել այլ եակ—անհատ:
 Դու ինձ ես սիրում, դու իմ իդեալ,
 Ես չեմ հավատալ,
 Վոր միտքը ճնշի սրտի բարախում,
 Սրտիդ մեջ մի այլ կրակ ե մխում...
 Յեզ այդ գոհարը նվիրել մեկին
 Ծատ ե լեսական—կաշկանդող հոգին,
 Նրա թռիչքը մի ցնորք անտես,

Յերերուն մի հող, ուր ինչ ել ցանես՝
 Պիտի թառամի, պիտի չորանա,
 Սկիզբ ու վախճան յերբեք չունի նա...
 Յեզ ինչ ե մեկը.

—Մեկը մի ստվեր, վոր ինչ ել լինի,
 Նման թույլ ու մեղկ ոտար հնչունի
 Արձագանք չունի.

Ա՛յլ ե հաղարը, այլ նրա կոչում,
 Նրա գրոհից աշխարհն ե թնդում...

Ա՛հ, այն աշխարհում կա մի ճանապարհ—
 Անձուկ ու փշոտ.

Ուր յեթե գնաս՝

Քեզ պիտի շողի վոսկի առավոտ.

Նա չե մի յերազ

Սիրելի ընկեր, և վոչ սին պատրանք.

Նա խոստանում ե քեզ իրական կյանք,
 Ինձ՝ նոր առավոտ...

Յ ե ր Կ ր օ ր Դ մ աս

Մ

Յեթե իրավ ե, նազելի սիրուն,

Վոր քո աչերը կյանքի ջերմ կարոտ

Մի նոր, իրական աշխարհ են փնտրում,

Յեզ ինձ խոստանում մի նոր առավոտ.

Արի տանեմ քեզ իմ սիրածի մոտ.

Դեպի գործարան՝

Արի տանեմ քեզ, ուր բանվոր մարդիկ
 Չեն ապրում միայն ցավով անձնական,
 Այլ ցավը քաշում չարքաշ մարդկության.
 Ուր գործ և կովի մեջ են վորոնում
 Հմայք-բանալին բախտավորության.
 Այնտեղ միասին և ընկերովի
 Իրար թև կտանք, նեցունկ կլինենք,
 Վոր ցավ ու զրկանք հեշտությամբ տանենք.
 Յես քեզ կսիրեմ վնչ լոկ սիրելու—

Հաճույքի համար,

Այլ սեղմ ձուլվելու քո մատաղ հոգում,
 Վոր դու ավելի լինես դիմացկուն
 Այս դաժան կյանքում:
 Ա՛խ, մանկությունից ընկեր սիրելու
 Խելագարն եմ չես,

Ու թե ինձ լսես՝

կգաս միասին,

Ել չես մտածիլ անհատիդ մասին.
 Յերանի՛ նրան,

Ով կանցնի քեզ հետ կյանքի նոր ուղին:

VI

— Գնանք գործարան...

Բայց լսի՛ր ասեմ, սիրելի ընկեր,
 Վոր չկան այնտեղ ծառ ու ծաղիկներ,
 Բաղեր ու խոտեր,
 Հավքերի նվագ, գուլ-գուլ աղբյուրներ,
 Յե՛վ վոչ ալ վարդեր.

Չես տեսնիլ այնտեղ լուսնյակ գիշերի
 Լուսաշաղ ամպեր,

Վնչ ել սիրահար ջահել արևի

Կրճոտ համբույրներ.

Այնտեղ ծառի տեղ ցցված են խրոխտ
 Յերկաթե սյուճեր,

Բաղեղ-խոտի տեղ ցանցերի փշոտ

Պողպատե լարեր,

Գեղախոս թռչոց յերգի փոխարեն

Կը լսես այնտեղ

Ճախարակների ոնգային վոթոտ,

Յե՛վ խենթ փոկերի համերգը անեղ.

Այնտեղ խեղդվում են շոգու ամպերեն.

Պաղ աղբյուրի տեղ՝ քրտինք ամեն որ,

Վարդի փոխարեն

Ծորում, քամվում են արյուն սրտերեն,

Յե՛վ շուրջդ բոլոր

Շոխնդ ու ժխոր...

Կը տեսնես, ինչպես թանձրացած մխով

Ծխնելույզները

Յերկինք են կառչել ազահ չերախով,

Մրոտ պնչերը

Կարծես հրաշունչ վիշապի նման

Ուզում են շնչել

Ու իրենց քարշել

Անհուն բարձունքից փայլուն ամաղբերը,

Վոր նրանց թաղեն մշուշ ծխի-մեջ.

Կը տեսնես շարված սգավոր ու խեղճ
Արհեստափնոցի աղյուս-պատերը
Սոնավ ու թաց-թաց,
Կարծես բանվորի քրտինքով թրջված...

VIII

Յեվ դու կմտնես այն գործարանի
Կամարների տակ,
Վորտեղ յեռում ե թափով աշխատանք.
Կը տեսնես այնտեղ արհեստանոցի
Հարազատ զավակ կաղնի-բանվորին,
Կարծես Բահալը նստել ե նրա

Կորացած մեջքին:

Ա՛խ, շատ եմ տեսել նրան, իմ ընկեր,
Սեացած յերես, ծխի մեջ կորած,
Ու դեռ հասակը չերեսուն չառած՝
Կամ մեքենան ե ճխում իր թաթում—
Վտտքերը փշրում, բազուկը հատում,
Կամ ալ հեղուկը այրում, փոթոթում...
Յես տեսա նրան, սիրելի ընկեր,

Մի մթին գիշեր

Գուբան եր վառվում, փնչում կատաղած,
Ամեն անկյունից, վորպես վիշապներ,
Կարմոր կրակը լեզուներ հանած՝

Ոգը լիպելով յերկաթն եր ծամում—
Մուկ-ծուկ շիկանում,

Յեվ նրա դիմաց դարբինը կանգնած,
Ալ բոցի գույնից թափ, յեռանդ առած՝
Չորցած մատներով յերկաթն եր կռում
Յեվ պողպատ մեջքով համառին ծռում,
Կռում ու կովում...

Յեվ մինչ մի նոր ձև, մի կյանք չէր տալիս
Անշունչ մետաղին՝ չէր հանգստանում:
Յեվ խորհում ելի... անա թե ուր ե
Չգտում բանվորի ստեղծող վոգին,
Անա թե ինչու կարմիր-ալ գույնը
Նա սիրեց այնպես խանդաղատապին.
Ու թեև կաթ-կաթ քրտինք ե ծորում..

Մրտ ճակատից,

Բայց ելի մի իր, մի գործ ե ձուլում

Անշունչ յերկաթից,

Մի գործ հոյակապ,

Վորով կոփվում ե իր կամքը յերկաթ,
Մնվում ու բովվում հավատն անհաղթ,

**

Մի ուրիշ անգամ այն տիտաններիս
Յես տեսա, ընկեր, մեծ ձուլարանում.

Դույլեր ու ձողեր ձեռքերը առած՝

Ջեռուն հնոցի շուրջը բոլորած՝

Թուջ ելին հալում:

Վազրանն ամեհի կարմրել եր, փափկել,
Ուզում եր պայթել...

Յեկ անա մեկը անվեհերներէց

Սուր ձողը ձեռքում

Վագրանի կուրծքն է զայրույթով մխում,

Յերակը խայթում.

Կարմիր հալոցքը արյունի նման

Վիժում է ուժգին,

Կարծես հոխորտում կլանել նրան՝

Ով վոր խիզախեց վերք ասլ իր կրծքին.

Բայց բանվորը քաջ սովոր է նրան,

Ծաղրում է, հեզնում ջեռուն հեղուկին.

Հալոցքի՝ մեջ է սնվել, մեծացել

Նրա հաղթ հոգին:

IX

Վորպես հրաբուխի ջեռուն ձուլածո՝

Շիկնած դուլլերում հալոցքն է յեռում,

Մարդիկ վտանգի հարայ-հրոցով

Հալոցքը դեպի ձևերն են բերում.

Ահա հասել են ձև-կաղապարին—

Մահ ու դժոխքի այս ճանապարհին՝

Հանկարծ վարպետի խրոխտ հրաման...

Ու մի վայրկյանում տասնյակ բազուկներ—

Լարված մկանունք, ուռած յերակներ

Գուլն են ծռում դեպ ձևի բերան,

Կոկորդը թափում հալքը հուրհրան.

Կարմիր հեղուկը հալած չուզունի

Ոլորտում է խենթ հոսանքի նման.

Բոցեր են լեխում կրծքիցը հողի,

Ծծմբահոտից գաղջանում ողբ,

Բայց հվ է նայում վիշապի խաղին—

Բալաստը նրան զսպել է արդեն.

Ուրախ են մարդիկ ու գոհ են նրանք,

Վոր հուր տանջանքից ծնվեց հաղթանակ.

Գեանի տակ ձուլված գործը կենդանի

Իր գիրկն է առել հողի կաղապար,

Գործը մարմնացել... Կեցցե՛ք գաղափար...

X

Այդպես շարժվելու նրանք միշտ սովոր,

Այդպես անհանգիստ յեռուն ամեն որ

Գալիս են անվերջ:

Հաղարը մեկի պես, մեկը՝ հազարի—

Մի ալիքից յետ՝ բլուրավոր ալիք,

Չուլվում է յես-ը հզոր մեքե-ի մեջ

Յեկ մեռած կյանքի հուզում փոթորիկ.

Նրանք գալիս են մի-մի առավոտ—

Սավար մտքերը ճառագայթելու,

Նրանք պայքարում չարքաջ մարդկուրթյան

Հանգիստ բերելու.

Նրանք տանջվում են վնչ ինձ, քեզ, մյուսի,

Չորրորդի համար,

Նրանք մեռնում են ինձ, քեզ, յերրորդի—

Շասերի համար.

Յեզ հսկայական մի ցավով տարված՝
 Զգտում են առաջ, անցնում խուժերից,
 Յեզ սիրտն է թնդում այդ միուժյունից:
 Տես, այդ նրանք են, ուր ամեն մեկը
 Մի քար է քաշում մրջյունի նման
 Ապագա շենքի կռիւու հիմքը,
 Յեզ յերբ տեսնում է պատերը լեւան,
 Յեւան, բարձրացան և գործն ել կենդան՝
 Վոզևորվում է առյուծի նման:

Գնանք գործարան,

Դեպի կարիքի, քաղց ու տանջանքի
 Այն յեռուն քուրան.

Այնտեղ կտեսնես զրկանքի վորդուն,
 Ուր ինքն աշխատում, ուրիշն է ուտում.
 Այնտեղ կարող ես հասկանալ մարդուն,
 Լվանալ վերքեր սրտիդ արյունով,
 Հրեշտակային այդ բարիք դեմքով,
 Քնքուշ, նբբազգաց կանացի հոգով
 Այնտեղ կարող ես ցավեր ամոքել
 Յեզ վհատլալի սիրտը բորբոքել,
 Վոր լքման ժամին

Վշտին դիմանալ նա կարողանա,
 Մինչ մի լավ ոբի նա կմոտենա...
 Մոտեցիր նրան, այ իմ սիրելի,
 Տանջվիր նույն ցավով.
 Նա, ով շատ տանջվում
 Ամենից լավ է կյանքը հասկանում...

XI

Յեկել եմ կանգնել թավուտ անտառի
 Մի լայն բացատում, կանչում եմ նրան.
 —Ո՛ւր ես, սիրելիս, ո՛ւր, իմ նազելիս,

Գնանք գործարան...

Բայց նա չի լսում... ախ, նա չի գալիս...
 Շուրջս մայրիներ, դալար ու ճկուն,
 Շուրջս կաղնիներ, ջա.ել ու տոկուն,
 Այստեղ անտառի համեստ ծաղիկներ՝
 Մեխակը կարմիր բյուրով դիմացկուն,
 Հասմիկը նազան, պայծառ ու ժպտուն՝
 Իրենց անտառի յերզնն են յերգում—

Մեզ իրենց կանչում...

Նորից ձայն տալիս, նորից եմ կանչում.

—Նազելիս, ո՛ւր ես,

Զե՛ վոր սիրեցի, փայփայեցի քեզ,
 Ինչպես արևը, վոր կյանք է շնչում

Դալկացած ծաղիկն,

Ինչպես գաղնան ցող, վոր ծիլ է տալիս
 Նրա արմատին:

Ու նա չի լսում, ու նա չի գալիս,
 Նրան այլ ցնորք, այլ կյանք է քարշում.
 Գուցե և կյանքը—լի հաճույքներով,
 Գուցե և կյանքը—մանր հոգսերով...
 Ու գնում է նա հափրած իր բուլբուլից
 Բախտ յերազելու իր մեղկ ջերմոցում.

Ու գնում ե նա... ո՛վ գիտե, գուցե,
 Ինքն ել այսորից
 Վորպես թույլ ծաղիկ առանց նեցուկի,
 Առանց խնամքի,
 Պիտի չորանա, պիտի թառամի,
 Մանր, առորյա մի պատահարից...

XII

Ասել եր մեկը չույն գիտուններից,
 Վոր լուսնյակի տակ
 Ամեն ինչ շարժվում, փոխվում ե նորից —
 Յեվ այսպես անվերջ...
 Ա՛խ, յես մնացի դարձյալ մեն-մենակ
 Իմ ցավերի մեջ:
 Վորպես մի ցնորք, գուցե և պատրանք,
 Նա յեկավ, անցավ,
 Շոյեց, փայփայեց, ընդգրկեց հոգիս,
 Նորից չքացավ:
 Նա լեկավ, անցավ ասուպի նման,
 Վորպես հուզող տենչ,
 Ու թողեց սրտիս ցավոտ պատմության
 Մի տխրալի եջ.
 Յեվ յես զգացի, վոր նա ինձ համար
 Մոտիկ, բայց ոտար՝ և՛ կար և՛ չըկար:
 Յես տեսա նրան իմ յերազանքում,

Յես տեսա նրան յեթեր-բարձունքում
 Լուսնյակի պես յերեսը հանած
 Ամպերի ծոցից,
 Անհասկանալի, յերազ աչերով,
 Դյուրթական ժպիտ շուրթին փայլելիս —
 Ինձ վեր կանչելիս:
 Ա՛խ, յես հասկացա, վոր իմ նազելիս
 Կովի չէր սովոր,
 Նրան հանգիստ եր միայն հարկավոր,
 Գուցե և վաղանց մի կլանք բախտավոր...
 Յեվ յեթե այդպես՝
 Ինչո՞ւ իմ հոգին կրակվեց այսպես...
 Ա՛խ, այդ չիմանաք վորպես մի կատակ,
 Թյուրիմացություն չէր դա մի դատարկ —
 Սրտի գնդտնիքն եր, բոցի պես հալող,
 Այրող, տոչորող,
 Բայց ելի ծարավ սիրո սեղանից —
 Անկուշտ իբրբից.
 Սրտի գաղտնիքն եր արյունը վառող,
 Ուր յերկու համառ, սնհանգիստ ուժեր
 Չգտում են իրար,
 Բայց ծածուկ տանջվում մեկ-մեկու համար.
 Գուցե և հոգու, մտքի իմաստի
 Ներշնչումն եր այս,
 Վորը ապրում ե մարտիկ պոետի
 Թռիչքում անհաս.

Յեվ նոր հասկացա, վոր չես այրվել եմ
 Լոկ իմ կրակից,
 Վորը մի անգամ մարդու մեջ վառվում,
 Մարում է նորից.
 Վեր նա մի անոթ, ուսկից ծծել եմ
 Հեղուկ կենսաբար,
 Նա մի բնություն, վորից ազդվել եր
 Հոգիս խանդավառ...

1909

ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Մտել եմ ահա մի նորեկ աշխարհ—
 Մտել մի սքանչ հեքիաթի դռնով.
 Աբտեղ ամեն ինչ նոր է ինձ համար—
 Նոր ու կատարյալ իր վեհությունով.
 Արևը այստեղ փայլո մ է թեև
 Առաջվա շուքով,
 Աստղերը գոհար ժպտում, ծիծաղում
 Գեղ ու հմայքով՝
 Մեր կովող գետերն փոթորկող, ահեղ,
 Մեր անտառները թավավարս, շքեղ,
 Թեև խոսում են առաջվան հանգով՝
 Բայց կյանքն է ուրիշ, մարդիկը մի այլ
 Ու ել վաղեմի չեն նման իրար:
 Մի հեքիաթ է այս, տեսիլ աննման,
 Ուր հազար-հազար
 Տասնյակ հարկանի տներ ու շենքեր
 Նալում են իրար տիտսնի նման.
 Այստեղ ամեն տուն և ամեն մի շենք
 Մի-մի քաղաք է, մեծ ու փառաշեն,
 Ամեն մի փողոց՝ ծով համատարած,

Ամեն տանիքի արևը՝ բազմած...
 Հրեն քաղաքի հեռածայրերում

Շարեշար, հպարտ, գեղեցիկ սիրուն
 Գործարաններն են վեհապանձ իշխում,
 Վերամբարձ գլխով աշտարակներից

Լույսեր են բաշխում.

Հրեն մաքրաշեն ջրերի հույզեր,
 Կանաչ պուրակներ և ծաղկանոցներ,
 Ամեն մի շենքի և գործարանի

Փարթամք են կազմում.

Յեվ մարդիկ այստեղ ամենքն են բանվոր

Յեվ աշխատավոր,

Ուր չկան այլ ևս վոչ մի լիոնատեր

Յեվ վոչ չքավոր

Այստեղ ամենքն ել ընկեր-բախտավոր,

Իրար հավասար

Յեվ մեկը՝ հազար:

II

Մի հեքիաթ ե՛ այս, մի նորեկ աշխարհ...
 Յեվ չես աչքերիս կուզեմ հավատար.

Միթե յերեկվա գառնուկն և գայլ,

Առյուծ և այծյամ վերացան իսպառ.

Այս ի՛նչպես, ի՛նչպես...

Այս ի՛նչ փոթորիկ, մրրիկ հեռատես,

Յերկրաշարժ ահեղ,

Անողոք հեղեղ

Քանդեց, ավերեց կարգերն անցյալի

Յեվ հավասարեց հողի ու ջրի:

Այս ի՛նչ հզոր ձեռք փեց, խորտակեց

Շահագործության հիմնաքարն այն,

Վոր այսքան տարի,

Վոր այսքան տարի,

Ճնշել եր մարդուն քրտինք-արյունի:

Ազահ գայլերը ո՛ւր են, ո՛ւր, այսպես.

Այս ի՛նչպես, ի՛նչպես...

Չարիքն այնքան յեռուն, խտացած

Յեվ արմատացած,

Հավիանական դարերով բարդված

Նախանձը մարդկանց

Ուր մարդը մարդու համար գայլ միայն՝

Միթե վերջ առան,

Միթե վերջ առան...

Տիրակալության, ընչասիրության

Այն քաղցը ազահ

Վոր մարդոց արյան հաճույքն է միայն,

Ի՛նչպես վերացան,

Ի՛նչպես վերացան...

Թե՛ յերկրագունդը մեր այնքան փխրուն

Մի նորեկ սիրուն,

Ազնիվ մետաղից, հոլակապ քարից

Քանդակվեց նորից:

Թե՛ այն բյուրավոր արհավիրքներից—
 Համաշխարհային պատերազմներից,
 Վորից լեռնանցավ հրդեհի մոխիր,
 Վորից ցնցվեցին յերկինքն ու յերկիր,
 Պայթեց ու ժայթքեց մի վրեժ արդար
 Ի հատուցումն գործերի վատթար:
 Այս ի՞նչպես, ի՞նչպես,
 Ի՞նչ հրաշք ե վես...

III

Յե՛վ յես կանգնել եմ այս նոր աշխարհի—
 Հրաշքի առաջ,
 Ու չեմ գարմանում, վոր այն լեռները
 Ձույլ-վոսկիների
 Կեղեքվածքներիս արյան ե հառաչ.
 Վոսկիները այն.
 Վոր ծառայում են այժմ արձանների
 Պատվանդան միայն,
 Վորոնք ձգված են լայն փողոցներում
 Կարգով շարեշար,
 Նորեկ սերնդին հին-հին գործերը
 Պատմելու համար.
 Ու չեմ գարմանում, վոր այսօրը մեր
 Մոտիկ անցյալի մի թելն ե միայն,
 Ուր կան նոր կռիվ, նոր նվաճումներ,

Կյանքը հասցնելու կատարելութան.
 Կյանքը այն դժվար, վոր միշտ ե պայքար
 Նոր մարդու համար.
 Մարդու, վոր կովող հատվածն ե միայն
 Տարնըք-բնության,
 Ուր ուղեղը մեր աճուն, հարաճուն
 Պիտ արագությամբ գործի կալծակի
 Յե՛վ տա նոր ձևեր, նոր իմաստ կյանքին—
 Գործի, ստեղծի դերամարդկային
 Սանդավառությամբ,
 Յե՛վ ինչ ել ունի, շնորհք ու յեռանդ,
 Հանճար ու տաղանդ,
 Չոհի հաղթանքին ստեղծագործության:
 Ո՛ր, դու, հաղթանակ մարդկային ջանքի,
 Լարված ջղանքի,
 Ո՛ր դու, հաղթանակ վե՛ն աշխատանքի
 Յե՛վ ուժեղ կամքի,
 Հաղթանակ ազնիվ. անհանշտ, անհանգիստ,
 Շարժուն հար ընդ միշտ,
 Քո հետևանքը այս պիտի լիներ,
 Այս պիտի լինի որդդ այսօրվան,
 Այս ե կյանքը մեր.
 Մինչև ցորենը հողում ՚ի մեռնում՝
 Մեկը հաղարի պտուղ չի բերում.
 Մինչ վոր մարդկային հերոսը ցեղի
 Կովում չի ընկնում՝
 Հավասարության և Յեղբայրության
 Չի հարթվում ուղիներ

IV

Յեվ յես հեքիաթի շեմքին խոնարհած՝
 Հիանում եմ լոկ այս նոր աշխարհով,
 Մի աշխարհ չքնաղ, վոր ալիք առած՝
 Ծփում ե, շարժվում, վորպես յեռուն ծով.
 —Ե՛յ, հազմր, հազմր ավտոմորիլներ,
 Վոր այդպես արագ թռչում եք, սլանում,
 Ո՞ւմ եք պատկանում.

—Հանրապետության...

Ե՛յ, հազմր, հազմր լույսեր ելեքտրյան,
 Վոր գիշերները արև եք վառում,
 Ո՞ւմ եք պատկանում.

—Հավասարության...

—Յեվ դուք, աշխարհի գեղեցկուհիներ—
 Հաղթ մեքենաներ ու գործարաններ—
 Վոր քար ու հողից բարիք եք ծնում,
 Ո՞ւմ եք պատկանում.

—Բանվոր մարդկության...

—Դուք, նավեր, ջրեր, լերկաթուղիներ,
 Հանքեր ու ցանքեր ազատ աշխարհում,
 Ո՞ւմ եք պատկանում.

—Հանճար մարդկության...

Համալսարաններ, աստղեկայաններ
 Վոր այն հեքիաթի պարծանքն եք կազմում,
 Ո՞ւմ եք պատկանում.

—Մեկին, ամենքին իրար հավասար—

Ուր հանդարն է մեղ և մեկը հազար:

V

Տեսել՝ եք արդյոք վաղ արշալույսին
 Նորածին կանաչ—ցողը յերեսին,
 Կամ ծով-լեթերում լուսաշող ամպեր
 Անբիծ անաղարտ, ինչպես կարապետ:
 Կանաչների մեջ և վարդերի մեջ
 Յես տեսա այստեղ մի ավան սիրուն,
 Բաղաքից հեռու շարեշար անվերջ
 Միահարկ տներ—շուրջը վողջ գարուն:
 Տները այստեղ բյուրեղից են վողջ,
 Հուլիների հեղեղ, արևն ընտանի.
 Այստեղ ծլում է մի սերունդ առողջ
 Գեղ մանուկների.

Ինչպես միաձև ու պարզ են հագնված
 Այս զավակները նորեկ աշխարհի,
 Յեվ ինչպես սիրով և ինչպես ազատ,
 Աղջիկ ու տղա իրար հարազատ,
 Կարծես ամենքը մի մորից ծնված,
 Մի որ մեծացած ու մի տեղ մնված,
 Սաղում են կայտառ, ծլվլում սրտանց,
 Նախանձ, չարություն ոտար է նրանց.
 Յերգում են վորպես գարնան թռչուններ,
 Վոչ վոք նրանցից հոգս ու ցավ չունի...
 Սակայն ինչո՞ւ այս գեղ ծաղկանոցում—
 Բնության ծոցում—

Տեղ-տեղ փթթել են ծաղիկ հասակներ—
Պատանիների,

Ծաղիկ հասակներ, ինչպես պսակներ,
Վոր շուք են տալիս դաշտերի միջին
Թափշ կանաչին.

Ովքեր են սոքա, ինչո՞ւ յեն այստեղ,
Այս ճանկանց միջին:

—Նորեկ աշխարհի ողակներն են այն—
Համերաշխության,

Վոր ամեն անգամ իրենց հմտությամբ
Ոգնեն, աջակցեն դեռ ևս անփորձ

Այս մանուկներին,

Ոգնեն, աջակցեն և ուսուցանեն

Մեկը ամենքին,

Վոր այս հասակից մատաղ սրտի մեջ
Հավասարության և յեղբայրության

Զարգանա վոգին:

VI

Ահա և նրանք՝ գործարանները
Նոր սերունդների,

Ահա և նրանք՝ ստեղծողները
Այս նոր աշխարհի,

Հոյակապ, սիրուն, վողջը ապակյա—
Լույսերի աղբյուր:

Հատակը հղկուն, հարթ՝ ճենապակյա,
Ողբ համասփյուռ.

Մտել եմ նրա կամարե դռնով—
Նման տաճարի,

Այստեղ ե ծնվել, այստեղ սավառնում
Վոգին հանձարի...

Ահա և նրանք— ճախարակները
Զուգահեռ շարքով,

Վորպես տիտաններ՝ մարմար հիմքերին,
Բազմե, են կարգով,

Գործում են թափով, մրրկում արագ,

Տենդային հեքով

Յեվ լսելիքը շոյում միանվազ

Հաղթական յերգով:

Այստեղ չե՞ լսվում առաջվա նման

Շոինդ ու շառաչ,

Վողջը խոնարհվել, վողջը զսպվել ե

Հանձարի առաջ.

Յեվ մարդու համար մեքենան անաս.

Մի զսպված գաղան,

Վոր ինչ ուղղություն և ինչ ընթացք տաս՝

Կըլսի անձայն:

Ո՛ր, գիտակցություն,

Վոր խենթ մեքենան մինչև իսկ անգամ

Դարձել ե խոհուն ընկերը մարդկանց...

—Ներդաշնակություն,

Վոր աշխատանքի ժամերին անգամ

Լարված ջղերին հանգիստ ե շնչում,

—Չորս ժամ աշխատանք.

Ուր մարդն ե խոյում հաղթանքից հաղթանք

—Հավասարություն,

Վոր այս համերաշխ աշխատանքներից
 Ոգտվում ե համայն հասարակութունն,
 Ապրում իրենի, ընկերի համար—
 Իրար հավասար,
 Ուր հազարն ե մեկ և մեկը՝ հազար:

VII

Բարդ մեքենայի խոնարհ սպասում
 Բանվորն ե կանգնել,
 Յեվ հում նյութերից թելեր ե հյուսում—
 Ջյունների լեռներ.
 Մի բոպե, վայրկյան, մի արագ պտույտ
 Յեվ հույսերը աչն
 Այլ մեքենայի տեսնում ես կույտ-կույտ
 Ուսերը յելան:
 Ճարպիկ մեքենան բերանն ե առնում
 Թելերի խուրձեր,
 Ծամում, կլանում և կրճքից հանում
 Պատրաստի գործեր,
 Նրա հարևան մեքենայի ճաղն
 Վրա յե հասնում,
 Յեվ քուլա քուլա գործվածքը շարմաղ
 Ծալում ու դարսում.
 Ծալում, փաթաթում քաթանի հակեր
 Պողպատ մատերով
 Յեվ շտապ հասցնում այլ բաժանմունքներ
 Վագոնետներով...

Այստեղ ե ահա, վոր կյանք ե առել
 Մի ուրիշ աշխարհք,
 Գործում են հազար ժիր մեքենաներ—
 Միղունների շարք.
 Յեվ ամեն մեկը ճերմակեղենի,
 Մի մասն ե ձևում,
 Կարում ու հարթում խելացի, զգաստ
 Ու՝ գործը պատրաստ:
 Յեվ աշխատանքը, վոր բեռ եր առաջ,
 Ջրկանք ու տանջանք՝
 Այժմ դարձել ե նոր մարդու հակար
 Հոգու զվարճանք.
 Մարդ ու մեքենա սիրով համերաշխ
 Գործում են ուրախ,
 Կում ու կոփում նոր սերունդների
 Ապագան չքնաղ...
 Յեվ այս ամենը դարձյալ իրենի—
 Ընկերի համար—
 Իրար հավասար,
 Ուր հազարն ե մեկ և մեկը՝ հազար:

VIII

Վողջճւլն ձեզ վողջճւլն, նորեկ աշխարհի
 Ազատ զավակներ,
 Վոր դարեր, դարեր ձեր մեծ հայրերի
 Հարատև ջանքեր

Այսօր պսակվեց վսեմ գործերի
 Վեհ հաղթանակով,
 Յեզ այժմ գիտեք անցյալը հիշել
 Անուշ պարծանքով:
 Վողջճւլն ձեզ, վողջճւլն, յերջանիկ դարի
 Անխոնջ զավակներ,
 Վոր հաղթ ու անդարձ այս մեծ որերի
 Տերերն եք դարձել:
 Իմ վառ խոհերին մարմնացում ավող,
 Հերոսներ կարող,
 Ձեզ հաղար վողջուլն, վոր կյանքին մեր այս
 Շնչեցիք իմաստ,
 Յեզ մարդն այսօր ազատ ու տիրող
 Ձե նախկին գրաստ:
 Ու ձեզ ել վողջուլն, կարմիր որերի
 Հրգեհի կայծեր,
 Վոր ձեր մեծ ճամբի խուժերը այրած
 Յեզ ընդմիջտ անդարձ՝
 Մի վեհ, փառավոր ուղի յեք անցել:

IX

Հրեն գալիս են կարմիր ջահերը՝
 Նորեկ աշխարհի,
 Հրեն գալիս են պայծառ աստղերը
 Վորոնումների.
 Յերկու սեւից ել մտել են այստեղ—
 Տունը գիտության,

Վորոշել բախար ընթացիկ որի
 Հանրապետության:
 Ա՛հ, այն դեմքերը ազնիվ ու խոհուն,
 Զգոն և ուշիմ,
 Յեզ այնքան բարի, և այնքան բարի,
 Ամեն մի կնճիռ և ամեն խորշում
 Նրանց վեհ դեմքի պատմությունն ունի.
 Ու քանի՜-քանի՜ կրել են տանջանք
 Այս դեմքերը կերթի,
 Մինչ վոր առել են կատարելության
 Դրոշմ ու կնիք,
 Վորքան մաքառել ու տառապել են
 Սրանց մեծ նախնիք,
 Մինչ մեզ թողել են այսպիսի դեմքեր
 Վեհ ու գեղեցիկ:
 Ահա ամբիոն յեղավ մի գիտուն,
 Լըջմիտ ու խոհուն,
 Առանց կրքերի և հուզումների,
 Պարզ ու հյութալի, համառոտ ու լի
 Իր գյուտի մասին հայտնեց ամենքին,
 Յեզ իր հանճարեղ զորությամբ խելքի
 Դահլիճը բերեց խոր համոզմունքի:
 Յեզ լես զարմացա, վոր մարդն այսօրվա
 Յերջանիկ ու լից,
 Գոհ չե այս որից.
 Վորոնում ե նա նոր հորիզոններ
 Նորից ու նորից...

X

Ահա և կյանքը այն կարոտալից,
 Վոր թվում եր ինձ հեռու մի յերազ,
 Նա, վոր յեթերի անհյուս թելերից
 Իր ձեռքն եր մեկնում և մնում անհաս՝
 — Իրականութուն, իրականությո՞ւն...
 Միրել եմ կյանքը չես առաջներում,
 Նրա մըրկող թափը չերկրային,
 Միրել եմ նրա ուղին դժվարին
 Ու յերգել անվերջ իմ հին յերգերում:
 Միրում եմ ահա կյանքը այսորվա
 Իրա հաղթանքով, իրա պարծանքով,
 Հավերժը նրա, խինդը առորյա,
 Միրում եմ նրա վեհ գեղեցկություն,
 Նրա դըռշը կարմիր, փողփողուն,
 Վոր բերեց այսոր մեղ արդարություն,
 Հավասարություն և յեղբայրություն:
 Միրում եմ կյանքը, սիրում եմ այնպես,
 Ինչպես նորահարսն իր փեսացուն,
 Ինչպես ծաղիկը արևի շողին,
 Ինչպես անձրևը յերաշտած հողին.
 Միրում... եմ և, մխ մեռնել չեմ ուզում.
 Չե՞ վոր նա, կյանքը, մի անուշ հուզում,
 Դեռ այնքան կռիվ, փոթորիկ ունի...

Բայց թե մեռնեմ ել, եհ, այդ ի՞նչ մնաս,
 Չե՞ վոր յես ևս մի հյուլե, յերազ,
 Այս նոր աշխարհին իմ լուծան տվի,
 Յեղբորս համար, ընկերիս համար
 Ի՞րար հավասար—

Ուր հաղարն ե մեկ և մեկը՝ հաղար:

20 դեկտեմբեր, 1916

31 հունվարի, 1917

ՔՍՂԱՔԸ

Առաջին մաս

I

◆◆◆ **Ո**ւ հայրս ասաց.

— Գնան, վորդի ջան, աշխատիր դու ել...
 Հացը մեր տաշտից վաղուց պահասել՝
 Չորթան ել չունենք, թե գլուխ պահենք...
 Գնան վորդի ջան, աշխատիր դու ել...
 ...Ու մայրս ասաց.

— Գնան, անուշ ջան, քանի դու ջահել,
 Ձեռքումդ կա ուժ, մեջքումդ՝ զվաթ.
 Մայանի համար գնա բաժինք բեր...
 Գնան, անուշ ջան, քանի դու ջահել...

Ու մեջքիս կապած յերկու կորկի ճաթ,
 Տրեխս—հագիս, դուլաղըս—հավաք,
 Ճամբա ընկա յես գեպի Սև-Քաղաք...

* *

Դե մնաք ըստով, մեր տուն ու բախչա,
 Ձեր դարձերից եմ դադարդուն ընկել.
 Նաչար իմ անպին գլուխը չալած՝
 Կող ու բեկյառից վիզը բարակել...

Գուրս պառավել տանն ա մնացել.
 Նանս եծերի կոշտ պտուկները
 Ե՛նքան ա հունցել,
 Վոր ցամաքել են նրանք, չորացել...
 Գալիս եմ, քաղաք, քո ումուղին ենք
 Հիմա մնացել...

II

Ու մեր Թալիշից յես տեղ եմ հասել,
 Ընտեղից դայի Իվանենց տունը.
 Ա՛յ աղա, սհենց ել շնար եք տեսել—
 Ես հեմն ա եսքան հաբստութիւնը:

Գիշերները լուս՝ լուսընդի նման...
 Պարախողները վոնց են լ՛իլ տալիս.
 Հենցա մեր բնւլիք, մեր զազեր լինեն—
 Մեր գեղի գյոլը միտս ա գալիս:

Բն ըսհենց զարմացք չերկիր եք տեսել...
 Դիփ նոթ ու մազութ, դիփունք ել սև-սև
 Եստեղ մաշիններ, ենտեղ թորբաներ,
 Բնւղի մեջ կորած նոթի զավոզներ...

Մինը՝ դրմբում, մեկելը փշռում,
 Մինը բարձրանում, մյուսը քաշանում,
 Հենցա կորկոտի տինդ լինի բանում,
 Հենց ես իմանում թառթառն ա վշռում:

Ես դիփ դնրուլ ա, ընդհանակ ա մեզ.
Ամձա վոր կանաչ ծառ ու խոտ չկա՝
Ցավը հենց ես ա... ու չգիտեմ յես
Ես հարամ յերկիր ել ընչի՞ր յեկա...

Չայից՝ նոթի հոտ, վեննիդ միշտ մազուլթ,
Նորդն ել ընտեղ յերեսդ չանգորւմ.
Ի՛ վունն ասում ա ամսական տասնուլթ
Մանեթից ավել ըստեղ չեն առնում:

Ուրեմն ես ամ են քաղաքը մեծ,
Վորտեղ քուչեքում. ասում են, վոսկի,
Արծաթ ա թափած... հլ սրանից հեա
Ո՛վ կհալատա մարդկանց սուտ խոսքին:

Ուրեմն ես ամ են հարուստ Բագուն,
Վորը գովում են մեր Գյուլստանում...
Ա՛յ հարսմ ըլի ես տեսակ հացը,
Քիչ ա մնում – թե հրես գա լացս...

III

Սիրելի Թյունի,
Պարովագիրս խնթրեմ ընթունի.
Հենց նոր վերջացավ մեր աշխատանքը,
Ասեցի՛ գրեմ քեզ աչս նամակը:
Միայն բեղամաղ չլինես, Թյունի,
Յեթե նամակս փիս գրած լինի.

Գրում եմ չոքած պաղակոճճիկին,
Վոր դողդողում ա մեր մախավիկից.
Ա՛թուն, գիտաս թա սա ինչ գազան ամ...
Հարամի պսեմ, թե՛ սատանի չարխ...
Իե պատմեմ լսիր ընչի նման ա.
Մեր դեղի ծերին, մեծ գետի ուխին
Տեսել ես են մեր ճաղացի ակը...
Հենց նրա պես ա մեր մախավիկը...
Միայն նա՛ փետից:
Սա դիփ՝ արկաթից:
Դե, ել ինչ գրեմ,
Շատ յերկարացավ
Ես իմ նամակը.
Հն, մնես ընկավ.
Մեկ ել դրկում եմ քեզ իննը մանեթ,
Վոր թոփ եմ արել ես ամսի միջին.
Մեր հարսին ասա, թող չնեղանա,
Վոր գալս ընկավ ձմեռվա վերջին.
Ասում եմ, մի քիչ շոր ու շիրթ առնեմ,
Վոր մեր ապորը քիչ քյոմագ անեմ.
Դե, մնաս բարով, յեկա, քնեցի,
Վոր առավոտը արթնանամ վեցին:

IV

Թյոնի, ասըմ ես «կլամ», «չորուկ ա տարին»...

Յանի դե կարամ ասեմ թե մի գալ...

Հալրաթ պիտի կյաս—կյալդ ա բարի...

Ամմա իմացիր.

Եստեղ տանա հարս ու աղջիկ չկան,

Վոր ամեն շաբաթ կիրականամուտին

Վեններդ լվանան, փողքդ կրկատին:

Դրա տեղ ըստեղ մարդիկ շատ շուտով

Խելքանում են, խելքի ծով դառնում:

Են վոր քուրայում կրակն ա ծամում

Դամուր-յերկաթը...

Հենց ես իմանում, թե մարդն ել եդպես

Մի խամ լերկաթ ա... թակես՝ կդառնա

Մի բան պետքական—

Մի նալ, մի գուլթան:

Կգաս, կտեսնես մեր ելեքարիչնին...

Դիփ մի մավթուլ ա...

Ես մի մավթուլով սաղ են վավողը

Չբաղվանի պես համ պլպլում ա,

Համ տալիս խողը:

Ախ, Թյոնի ախպեր, են յերբ կլինի

Մեր ժողովուրթը իմանա բյուլթուն

Ես չարիս ու լուսի ուժի գորութլուն:

V

Են վոր ծեղ-ծեղին՝ առավոտները

Մեր վերցակները հարայ են տալիս,

Ենպես ել լոխ մեր սիվիստոկները

Նրանց պես ուրախ դուրա են տալիս:

Հաղար մի գուրոկ տված ձեն-ձենի,

Հենց ա մեր նախրի պառանջը լինի...

Դե, մնաս բարով, սիրելի Թյոնի,

Պարովագիրս խնդրեմ ընդունի:

Ես ա վերջացրի իմ աշխատանքը,

Բարով ստանաս դու իմ նամակը:

1912—Թիֆլիս

Յեկրոզ մաս *)

Յերկու լեղբայրներ—Ո՛հանն ու Թյունին

Ապրում են հիմա նավթահանքերում.

Կառուցման տենդուտ այս մեծ որերին:

Նրանք յերկուսն ել հանել են անուն:

Ոհանը պուղում յերհեմն դամրչի՝

Հիմա դարձել ե հմուտ մի դարբին.

*) 1930 թվի աշնան Ստեփանակերտի կուսգպրոցի աջակերտությունը և ուսուցչությունը պատվուս կազմակերպած յերեկութում տվեց ինձ սոցիալական մի պատվեր, —ավարտել «Քաղաքը» կիսավարտ պոեմս 1912 թվին գրած, —հանձնելով կատարում եմ հայրենակիցներին սոցիալական պատվերը. չ. Հ.

Թյունին Բնւխտայում անվան Իւլիշի—
Որինակելի մի հարվածային:

Յերկուան ել քալլած պաղպղի ճամպով
Բանի անգամ են նետվել նրանք բանտ,
Ոհանն անգամ իսկ քշվել ե Տամբով,
«Բախլում» նստել Թյունին անընդհատ:

Յեվ այժմ նրանք յերկուսով բովված
Հեղափոխության գտող կրակում՝
Դարձել են մի-մի հերոսներ գովված
Նավթահանքերի բանվոր աշխարքում:

Յերկուսով նրանք համեստ ու խոհուն,
Վոնց գլուխը քաշ պողատու ծառեր,
Մատաղ սերնդին կանաչ ու ցողուն
Ասել, ունին դեռ վոսկի շատ բառեր...

II

Պատահում ե, վոր ազատ որերին,
Յերկու յեղբայրներ իրար են գալիս,
Հիշում են անցյալն իր մուժ որերով,
Կարծես թե իրար հաշիվ են տալիս:

Ոհանն ասում ե.—«Գիտես, Թյունի ջան,
Թեկուզ իմ յանջ վաթսուն հինգ դառավ,
Բայց անտ եմ արել իմ զնդանի տակ
Մեռնեմ, վոնց վոր մի յարու ձի, պառավ»:

Բնդի մարդու պես, վոր կորուստ ունի,
Մինչև չի գտնում՝ չի հանգստանում,
Ենպես ել յես եմ, մինչև վոր ձեռքիս
Գործը չեմ պրծնում—քունս չի տանում:

Եշխի եմ գալիս ու ջահելի պես,
Ավելի սրտով վեր թակում սալին.
Ուզում եմ նոր կյանքը կռանեմ անյպես՝
Վոր ել հետ չգա գուլումն անցյալի:

Են մութ անցյալի խանի ու բլազի,
Վոր բահամ յեկավ մեր Թալիզ գյուղում.
Հիմա մատաղ եմ ես որվան, թա-քի
Նա հաստատ մնա Սավետի հողում...»:

III

Թյունին ել յեղբոր ես մասլահաթին
Պատասխանում ե նույնպես իր հերթին.
—«Հն, Ոհան ախպեր, ախպորս ասեմ,
Շատ թույն խմեցինք անցյալի թասեն...»

Են տարիք զնան ու հետ չդառնան...
Տունը միշտ տկլոր, դատարկ մեր մառան.
Մուկն ու մորեխը, կամ յերաշտ տարին
Մեր արվան արտեր վոնց մաղբուն արին...

Իսկ յերբ, ջիբերս մտնում եր մեկուց
Մի քանի գրոշ կամ շահի բխտի՝
Են ել յա քյոխվեն, չա Թալիշ բեգը
Նլում եր ձեռքնես, լւի անում չխափի

Հիմա փառք լինի Սավետի կարգին,
Չավողը մերը, հողը գյուղացուն,
Մենք տերը ազատ մեր աշխատանքի—
Մոհտաջ չենք մնում հարամու հացին:

Ենտ ես աշխատում՝ տալիս են ավել,
Ծոլլ-քոռամալը մեր մեջ չունի տեղ,
Լավ ես աշխատում— ուտում ես լավ ել,
Հալալությունն ե տիրում ամեն տեղ:

Հիմա փառք լինի Սավետի կարգին,
Ե՛լ ազգամիջյան կռիվներ չկան,
Ամենքս լծված կոմունի կառքին՝
Չգտում ենք դեպի մեր լավ ապագան:

Նոխեքը ծրի ուտում են առնում,
Բեզար ես՝ գնա հանգստյան տունը,
Թե պառավեցիր՝ սովից չես մոռնում—
Բեզ համար բաց ե սոբեզի դուռը:

Գեղին տրաքտոր, բանվորին—ավտո,
Ի՛նչ լավ ե ասել Լենինն իմաստուն,
Դեռ հըլա դու տես սրանից հետո
Վճնց ենք շինելու Սոցիալիզմի տուն...

Մեկ ել, Ոհան ջան, անպորս ասեմ,
Մի բան չեմ տանում մինչև այսոր ել:

Յերբ միտս ա գալիս ցեխ ու բաթթաղում
Չորի մեջ կորած մեր Թալիշ գյուղը՝
Հենց եմ գիտում Թա ջահելս եմ Թաղում,
Ճրիվ ա գալիս քյալիս հըղողը:

Ձեթի ճրագի ու թոռ լամպի տեղ
Շուտով կժպտա Իլյիչի լամպան,
Ես ուրախ որին, ասում են, անգամ—
Եշխի ա չեկել մեր Քյոլքին անբան:

Հիմա մեր գյուղում յավաջ հա յավաջ
Տափի տակերից տներ են ծնվում,
Ու մեր նախրապան Վանին հնամաջ
Չաքմա ու Ֆրենչ ա հիմա հազնում:

Թառթառը շուտով լույսերի աղբյուր,
Գործարան ունինք Յեվլախում զտիչ,
Միրտս Թնդում ա, ա՛յ Ոհան ախպեր,
Մեր ես րբերի նվաճումներից:

IV

Ապա անցնում են լերկու լեղբայրներ,
Իրենց հին պաղպոլ աշխատանքներին,
Թերթում են անցած որերի գրքեր,
Ու խանդով հիշում գործերն անցյալի:

— «Մ'հան միտդ ան, ասում ե թյունին,
Վո՞նց եր Շահումյան շաքաշից հետո
Վերստեր չափչփում, ցիխին, անձրևին
Քարոզի գալիս մեր գավոդ վոտով:

Հեյ-հա, Ստեփան... չես չեմ մոռացել
Սմեն մի խոսքը նրա են ճառի.
Վոսկի պես խոսքեր... Ե՛ն վոր ասում եր՝
«Չկան յերևույթ առանց պատճառի»:

Ասում եր՝ «Գիտեք, գիտեք ընկերներ,
Կենցաղն ե բերում մեզ գիտակցության...
Յե՛վ պատմությունը մինչև այսոր ել
Դասակարգերի կոփվ ե միայն...»:

Բն բանանցեցի Միրուքը-Մելիք, —
Գյուղ ու քաղաքի դերվիշն են շրջիկ.—
Նրա թունավոր սուր նշտարներից
Դաշնակ ու հնչակ փախս ելին տալիս»:

— Հն, հն, թյունի ջան, լնվ ագիտատոր
Տղերք ունեցանք... Կորան, Ալլոշան,
Բաղդան Գնունին, Ալին, Ապոստոլն,
Սուրեն Սպանդար ու Կեցխովելին...»:

V

Այսպես յերկուսով խոսում են, դատում,
Ու վերջը գալիս այսպիսի հանգի.
Վոր ժամանակ ե իրենց գնալ տուն,
Հիմնել մի կոլխոզ—վուշ ու բամբակի:

— «Ախպորս ասեմ, խոսում ե Ոհան,
Բաքվին հալալ ա մեր յերսուն տարին
Գյուղը կանչում ա, հիմա ել նրան
Պեղմա մենք լինենք դուլ—հավատարիմ:

Մեր Զրաբերդի հանդ ու գյուղերին—
Առատ իր ջրով, պարարտ իր հողով—
Կոմունիստ ա պետք... Դե, նրանց սերին
Վախտ ա դառնանք գյուղ—տնով ու տեղով:

Կուլակների դեմ կովելու գնանք,
Մեր փորձով լինենք ուրհաթին քյոմազ.
Գնանք Թյունի ջան, մեր գյուղն թնլիշ
Մի քիչ ել այնտեղ, բնլամ, գանք չնլիշ...»

1931—ԹԻՖԼԻՍ

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Պատանեկ կյանքիս պոեմը)

Ղորխմագովենց հարուստ այգին
Մարդահասակ փշե ցանցով—
Կանաչ յաղուդ .. ու նրան գին
Դեռ չեք գտել վնչ մի սնցորդ:

Քաղաքից դուրս, տափարակում
Նա ձգվել էր ծովի նման,
Փարթամությամբ վողջ քաղաքում
Չկա այգի նրա նման:

Վաթսուն խյավանդ ունեք նա լի,
Նման մի-մի անծայր գորգի,
Ձիով ելին պտույտ գալի—
Ենքան մեծ էր են մեծ այգին:

Ծաղիկների Գյուլիստան էր
Ղորխմագովենց հեքաթ-այգին,
Թե մանեյիր՝ խելք կը տաներ
Բաղի բույրը, վարդն ու գյորգին:

Այգու միջին շքեղ մի տուն—
Մի դղյակ կար քարե շենքով.
Ու ապրում էր այն դղյակում
Ղորխմագո ֆու իր ընտանիքով:

Դադստանի յեր նա զավակ—
Ալեքսան-բեգ Ղորխմագովը.
Այլ և յերբեմն մեծ ավազակ...
(Ե՛, թող լալկվի եդ ասողը):

Ասում ելին՝ փախցրել էր
Մի ջահել կույս ու դարձրել կին,
Այնուհետև հանգիստ առել
Ու վերջ տվել ասպանդակին:

Գյուլըջի աղջիկ էր տիկինը,
Մի գեղեցիկ թասակրավի.
Ո՞վ է յեղել են մի կինը,
Վոր նրա պես սիրտն գրավի:

Յերգում էր նա իրենց բաղի
Բլբուլներից ել վառ կրքով,
Ո՞վ է յեղել, վոր չդաղի
Իր լսողին նա իր յերգով:

Ունեք դստերք դեռահասակ—
Չորս ծաղիկներ, գյոզալ, սիրուն.
Ամեն մեկը՝ դալար պսակ,
Ամեն մեկը՝ դյուլթող գարուն:

Յեթերային դույի նման
Ասես մի-մի մարքիդուհի:
Են վճր ասպետն եր լաման
Նրանց համար կյանք չզոհի...

Գարուն, ամառ, աշուն ձմեռ
Յերգն անպակաս են դոյակում,
Իշխանագուն բարձր հլուրեր,
Կառքերի շարք տան մղաքում:

Ե՛լ պաշտոնիք, գուրերնատոր,
Ե՛լ գեներալ ու լեսնիչի,
Ե՛լ պրիստավ ու դատավոր
Ե՛լ չինովնիկ ու սլեչի—

Ղորխմագավենց ընտանիքին
Վոնց հարագատ մի-մի անդամ.
Գալիս եյին քեփ ու յերգի,
Յերբ տխրեյին ամեն անգամ:

* *

Յես մի աղքատ մարդու տղա՝
Յերգում եյի բլբուլի պես,
Ու լսել եր հարուստ աղան
Իմ յերգերը վառ ու պես-պես:

Բերավ մի որ նա իր այգին,
Վոր չես յերգեմ իր հյուրերին,
Ու վառվեց իմ ջահել հոգին.
Յերբ տեսա այն սիրուններին:

Ու զըլեցի ձայնս վառված
Բլբուլների են պայքարին,
Մինչ վողջ այգին հիացք՝ դառած՝
Ականջում եր իմ յերգերին:

Յերգում եյի չես միասին
Շրջապատված գլոզալներով,
— Դու մի բլբուլ ես, ինձ ասին,
Սրանք վարդեր չորս գույներով:

Յերգում եյի չես իմ հյուսած
Նրանց բաղի գովքն ու փառքը,
Ժեռ քարերի տակից բսած
Ես աշխարհի խերն ու շառքը...

Հանկարծ տեսա մի գույգ կաթիլ
Փոքր աղջկա դույգ աչքերին.
Միբահարվել եր նա արգեն
Ու գին դրել իմ յերգերին:

Ի՞նչ եր պակաս այն գեղ-կուսին
Վոր արտասովեց իմ վառ յերգից.
Խոցոտվել եր, դու ձի ասի,
Նրա սիրտը նետիս վերքից:

Այնուհետև մենք շատ հաճախ
Կնստեյինք կանաչ խոտին,
Համբ ու անխոս և միայն «ախ»...
Յե՛վ միայն լուռ վատը-վատին:

Դալար, ճկուն, ծիլ-վազներից
 Կհյուսեցինք յերկու պսակ,
 Հեռու դիտող շար աչքերից
 Կաճեր ջահել յերկու հասակ...

* *

Ու մի որ ել ալդի յեկա
 Քսան տարիս լրիվ չառած,
 Ասի՝ կուգեմ ձեր աղջկան —
 Մենք վաղուց ենք սիրահարված:

Ծիծաղեցին ու ասացին.
 — Երու մի սոված, աղքատ տղա,
 Վճնց սիրտ առար եդպես հարցին,
 Դու՝ մի յեթիմ, մենք՝ մի աղա...»:

«Մեր ես բաղի ամեն մի ծառ
 Քեզնից շատ ե դեռ աշխատում,
 Առաջ գնա հացի տեր դառ՝
 Հետո միայն անցիր մեր տուն...»:

Ջահել եյի, չգիտեյի
 Անհաշտ լինել յերկու դասի.
 Դե, նրանք մեծ բեզեր եյին,
 Մենք՝ ողլուշաղ խեղճ Մինասի...

Ու սիրածիս տարան տվին
 Հարստացած մի բժշկի.
 Յես չեմ հիշում, թե իր որին
 Նա մի լավ որ տեսներ ըսկի:

Տխուր եր միշտ, թախիժ դեմքին,
 Ինչպես սիրող վորբեվալրի.
 Յերևում եր խոցը վերքի
 Շան եր խորունկ... սիրաբը կայրի...

* *

Անիծեցի յես այդ որից
 Դորխմազովենց տունն ու այգին
 Ասի ընկնեք դուք իմ որին,
 Վոր սև արիք որըս մանկին:

Այժմ ել են այգին չկա,
 Տեղը ցանում են թամբաքու.
 Ընտանիքը ցրիվ յեկած,
 Վորը թիֆլիս, վճրը Բագու:

Դադարգյուն են ընկել նոքա
 Հոկտեմբերյան քոռո դամշից.
 Դորխմազովենք դե թող սզան
 Ու արլինգ տան ավել գոմշից:

**

Ամեն անգամ, յերբ տեսնում եմ
Նրան անցնելիս մեր փողոցով՝
Սև մազերը ձյունով ծածկված,
Դեմքը տխուր, տխուր մի ծնվ...

Իրար նայում ենք աչքի տակով,
Կարծես խոսում անցյալի հետ.
Ջահելի պես կարմրատակում—
Նա՛ սիրազուրկ... չես՝ մի պոետ...

Հեքիաթ խո չե իմ պատմութունն,
Այլ մի տխուր իրողութուն.
Անցորդ, լեթե մտնես Գյանջա,
Կտեսնես իմ անիծած տուն:

Վոչ տան հիմքն ե ել չերևում,
Վոչ ել բարձր ցանկը փշի.
Մի ծուռ ծառ ե մեն չերևում—
Այն ել վկան՝ իմ ծուխ-հուշի...

920

ԲԱՅԸՆԵՎԻԿ Ե ՇԻՐ ԿԱՆԱԼԸ

Ն ա խ ե ր գ ա ն Բ

Յ ե կ է Լ ե մ ...

Յեկէլ եմ, վոր մի շնչում չերգեմ չերգե այն զիւ-
հնչունն,
Վոր ձուլեցին պոետներդ լոթհարյուր լոթ ուրվա
միջում:

Յեկէլ եմ, վոր վողջունեմ այն վայրերին քո սիրա-
սուն,
Ուր դարերով չերբեմն միայն ծղրիգներն եյին
խոսում...

Յ ե կ է Լ ե մ ...

Յեկէլ եմ համբուլը տալու այն չերաշտած կոշտ
հողերիդ,
Վորոնց միջից առատորեն կաթ ու մեղր ե այսոր
հոսում:

Դնւ, Շիր-Կանալ, վոր հազարանց քրտինքների մի-
ջից բսար,
Նրանց քրտինք գետեր շինած դարձար խորհուրդն
աշխատանքի,
Դնւ, վոր հազար հազարների քլունգների յերգը լսած

Առատութեան հիմնը շուրթիդ հիմք ես դնում մի
 նոր կյանքի՝
 Մեծ վողջույնի և հրճվանքի յերգն եմ բերում քո
 դաշտերին
 Յեզ հիացմունք բոլոր ազգի, բոլոր յերկրի պոետ-
 ներին:

I

Բայլշեիկ ե Շիր-Կանալը—մի աժդահա հեքիաթային,
 Շուրթը նրա ջուր ե խմում պաղ աղունքիցն Ար-
 փաշայի.
 Գլուխը հաղթ թաղել ե խոր կանաչագույն, գուլալ
 գետում,
 Պոչը հեռու կապսի ծոցում, ալիքներ ե հեռուն նե-
 տում:
 Մեծ ու մեծ ե Շիր-Կանալը, կամարաձև, գեղեցկա-
 թով,
 Փաթաթվել ե, վհնց ե գրկել Շիրահարթը չերկու
 թաթով.
 Մի խանդավառ կարոտ ունի, են ծարավը սիրած
 յարի,
 Վոր կարծես թե սեր ու խանդի կարոտել ե հազար
 տարի:

Հույզեր ունի սրտի խորքում խորհրդավոր իր հոր-
 ձանքով,
 Վողջ իրանքը դողունքի մեջ—ապրումների մի կրքոտ
 ծով.
 Յեզ ամենքին իր յերթի մեջ ում տեսնում ե ու ճա-
 նաչում՝
 Սոխոջումով, լսում ես մեկ ավետում ե՝ վողջո՞ւյն,
 վողջո՞ւյն...

II

Բայլշեիկ ե Շիր-Կանալը... այն վայրերը լերկ ու
 բարբառ,
 Վորոնք իրենց ծնված որից այրի եյին—մերկ-անա-
 պատ՝
 Այսորից չետ հազնելու յեն սիրակարոտ հարսերի
 պեա.
 Զուք-զարդարված խաս ու կանաչ, թավիշ մետաքս,
 զառ ու զառբար:
 Մի հմայող վոլորտումով, արծաթափայլ գրավչու-
 թյամբ.
 Հիմա հեռու հեռուներն են ձգվել ցանցերն Շիր-
 կանալի.
 Այնպես գրկել, այնպես ծծում հողի շուրթը ազահու-
 թյամբ.
 Վոր կասես թե հողն ե տնքում պինդ համբույրից
 սիրահարի:

Վնչ մի թիզ հող, վնչ մի ավան և վնչ մի գյուղ լսոչ-
կանդ դաշտից
Զգում ես վոր չի տանջվելու այսուհետև բարկ յե-
րաշտից:

Բայլ շահիկ ե Շիր-Կանալը, հոգսը քաշող ամեն մարդի,
Մեծահոգի, ներողամիտ՝ բարեկամի ու տմարդի:

III

Բայլ շահիկ ե Շիր-Կանալը... Գարու զավակ այս հերո-
սին,
Մեր այս դարու հարազատին ով չի տեսել՝ թող գա
տեսնի.
Միլիոնավոր պայթյուններ, հարձակումի ահանսե-
րով,
Արփաչաչի ժեռ ափերին գրոհ տվող ուռաներով,
Դիրքերից— գիրք, նվաճումներ, մի թոննեղ զոգող
մյուսին,
Աշխատանքի հերոսները մատի շարժով նրան ասին.—
Ուր ձեռք մեկնես՝ այնտեղ հրաշք, այնտեղ մի գյուղ
թող կանաչի,
Ուր յերևաս, ուր ել հասնես՝ մի նոր սերունդ այն-
տեղ աճի.
Ով ծարավ է՝ թնդ հագենա, ով յարամազ՝ թող կըշ-
տանա...

Ասպեա ե մեր Շիր-Կանալը, մի գյուղերցի ողնւլ ե նա
Յեւ դարդիման, և սրտաբուխ, և՛ լայնաշուրթ, և՛
հյուրասեր—
Քեփը տեղը, յերգը բերնին, խոսքը շուրթին, լիա-
ռատ սեր:

IV

Բայլ շահիկ ե Շիր-Կանալը... և գյուղերը գիրկն առած՝
Յանցել ե իր արլունատար յերակներով համատարած.
Մեկը պիտի հազարների մասին հոգա— մի ղեկավար—
Հազարները խանդով վառված պիտի հոգան մեկի
համար...
Հրեն Կապսը սարին կանգնած հովվականչի ձեն ե
տալիս,
Թե՛ հեյ, լսեք, հրես ջրիս ձենն ե գալիս, ձեզ ե
գալիս...
Կանգ ե առել Պոլիգոնը և սիրահար կույսի նման
Քրքջում ե ու սպասում, վոր գան գրկեն, սիրեն
իրան.
Անհամբեր ե Որթաքլիսան, բարախում ե սիրտը
նրա,
Յնծությունից շունչը պահած քիչ ե մնում ճչա,
պոռա.
Յերազում ե Թոփառլվան, աչքով անում Ղոնախրա-
նին,
Հասկանում ե Հաջի-Նազար ու կանչ անում հարևանին:

Այսպես մեկը ձենում մյուսին, ավետում ե հեռու
 տեղից—
 Դյուզաքյանդը՝ Գափանակին, Թափոլաղը՝ Իլխիա-
 բին.
 Այսպես մեկը ահա մյուսին ավետում ե լեբկու վերս-
 տից,
 Թե գալիս ե Շիր-Կանալը բայլըհիկը Հայաստանի:

Վ

Ուրիշ փանմ ու սամթ ել ունի մեր բայլըհիկ Շիր-
 Կանալը.
 Նա Շիր-վաշտի մեջքը գրկած կապսի մոտից, ինչ-
 պես նալը,
 Ջրընկեցով նորից պիտի թափվի ծոցը Արփաշայի,
 Վոր պալքարի միջից խլի ուժը հիզրո-Փիկացիայի:
 Յերգիչներից վճր մեծն եր աչն, վոր յերգել ե ուժի
 մասին,
 Շիր-Կանալը փրփուր խասով շիր-աւոյոժ ե, բաշը՝
 լուսին.
 Լուս թևերի փաղաքշանքով պիտի ցանցի վողջ
 գյուղերին
 Յեվ դինամոն կայծակ-փնջով այրի նիրհը մութ հյու-
 ղերի.
 Պիտի տեսնեն, վոր լուսաշաղ ասեղները ելեքորոնի

Միաք ե ցնցում, գյուղին ասում, վոր անելիք ինքն ել
 ունի.
 Շիր-Կանալը շիրի նման հոնդացող մի պատանի—
 Ալիքները փրփուր խասով լույս ապագան Հայաս-
 տանի:

ՎԻ

Մեր բայլըհիկ Շիր-Կանալը ուրիշ փանմ ու սամթ
 ել ունի.
 Ձիավորի սանձը ձեռքին հսկա ուժով ելեքորոնի
 Պիտի շարժի ու փոթորկի գործարաններ ու Ֆարբիկ-
 ներ,
 Ջրաղացներ, սղոցարան, ալեկոծի հող ու ցանքեր:
 Այն յերկերը, վոր դարերով քարացել եր ու ցամաքել՝
 Այսորից յեա պիտի յերգի աշխատանքի հզոր յերգեր:
 Ենտ հ լացել համր լացով Շիրակն իր դարդի մասին,
 Իսկ այսորից նա լի թոքով թող ամենից բարձր
 խոսի,
 Ենտ ե տանջվել ու տակացել անհարազատ մարդոց
 ձեռքին,
 Իսկ այսորից թող նվաճի ու տիրանա իր նոր կլան-
 քին:
 Ու կտանջվեր նա ել նորից, թե չծնվեր հաղթ պա-
 տանին,
 Թե չհասներ Շիր-Կանալը—բայլըհիկը Հայաստանի:

ՎԻՐՉՍՐԱՆ

Մատաղ լինեմ յես այն որին, մատաղ լինեմ յես
 այն ժամին,
 Յերբ ինձ նորից կվիճակվի ալցի գալու Շիր-Կանա-
 լին.
 Տեսա նրա լերկունքը յես, պեղումները տարի առաջ,
 Այժմ նրա բաղ ու բաղչեն, արտն ու հանդը, ծառ ու
 կանաչ.
 Վիլանների թավուտ անտառ, ծառուղիներ-ձաղկա-
 նոցներ,
 Վերոնց բույրից կըզգա նորից ջահելութուն հասակս
 ծեր.
 Յեզ գիշերը հաղարաչյա տարածելով լույսի փշեր՝
 ինձ կերևա հեռու տեղից մի աստղազարդ հեքիաթ
 գիշեր.
 Յեզ կըսուլեն ֆաբրիկների գուղոկները ուրախ կան-
 չով,
 Վողջունելով գյուղ ու քաղաք ալ բոցերի հուր ճա-
 ճանչով:
 Բալլըիկ ե Շիր-Կանալը՝ մեծ զավակը Հայաստանի,
 Նրա վորդին ջահը ձեռքին լույսի աղբյուր մի տի-
 տանի:

1924 հոկտեմբեր

ՑԱՆԿ

ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Եջ
1. Աղգալիններին	7
2. Պահակը	8
3. Իմ աշխարքը	9
4. Յերկու հին գվարդիականի	11
5. Աշխատանքի յերգը	12
6. Հեռւմ են ու տնքում	13
7. Յերկու ախոյան	14
8. Գործարան	16
9. Լուսաբացին	18
10. Համերգ	20
11. Մետաքսագործարանում	21
12. Մեկ ել, մեկ ել	22
13. Հեղափոխություն	23
14. Դարբնի լերգը	25
15. Մեռան՝ չկորցն	26
16. Նահատակները	28
17. Յես ձեզ ասում եմ	30
18. Մաքառման ժամին	31
19. Լոկո սոխակը	32
20. Կարոտ	33

	62
21. Վ. Ի. Լենինին	34
22. Ստեփան Շահումյանին	35
23. Գևորգ Աթարբեգյան	36
24. Լենինը անմահ	38
25. Քաղաքը	39
26. Սեյֆերը	41
27. Յեռայն եմ սիրում	42
28. Կարմիր զարնան	44
29. Նամուս ու ղեկրաթ	45
30. Չարըդ տանեմ	46
31. Ոտարն ու հարազատը	47
32. Հարձիկն ու աղջիկը	49
33. Լենինգրադ	51
34. Լանինգրադյան պոեմից (Իսակի)	59
35. Պեարոպավլովսկ	62
36. Չմեռային պալատ	64
37. Աճում ենք	68
38. Զարթոնք	70
39. Բազու	72
40. Գլանջա	74
41. Հեղափոխական բալլադա	76
42. Կրեմլի դահլիճում	77
43. Այսպես ե լինում	78
44. Պիոները	79
45. Քառյակներ	82

ՊՈՆՄՆԵՐ

	82
46. Նոր առավոտ	85
47. Հավասարություն	105
48. Քաղաքը	120
49. Համառոտ պատմություն	132
40. Բայլշևիկ ե Շիր-Կանալը	139

Հայաստանի ԽՍՀՄ-ի գրականության նախարարության հրատարակչություն
 Երևան, Կոմիտասի պող. 100
 1971 թ. հունիսի 15

Յեխ. խմբագիր՝ Գ. Ջենյան
Մեքագրիչ՝ Մ. Գեվորգյան

Հրատարակ. 3777. Պատվեր 863, գլավիլիս Ա. 1109.
Հանձնված է արտատրոյան 2 հուլիսի 1936 թ.
Մտորագրված է սպագրոյան 1 ոգոսոսի 1936 թ.

Պեհրատի սպարան, Յերեվան, II Գնունի 4.

30
« Ազգային գրադարան



NL0404871

28 ОКТ. 1936

689

ԳԻՆԸ 3 Ռ. 20 Կ.

1
3541



А. АКОПЯН

Избранные стихи

Гиз ССР Армении, Ереван, 1936 г.